ՀՖՖ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԶԱԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2025 թ. խմբագրություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4

ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 9

Հոդված 1. Կանոնակարգի առարկան, կիրառման շրջանակը և խնդիրները 9

Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները 9

Հոդված 3. Մրցումների բարեվարքային համակարգը 10

Հոդված 4. ՀՖՖ գործառույթները 11

Հոդված 5. Մրցաշրջանի ընթացքում ակումբների պարտականությունները 13

Հոդված 6. Մրցումներին մասնակցության չափանիշները 15

Հոդված 7. Մրցումներին մասնակցության համար դիմելու կարգը 16

Հոդված 8. Մրցումների մասնակցության մուտքավճարը 17

Հոդված 9. «Արդար խաղը» և գնահատման կարգը 17

Հոդված 10. Պարգևատրումը 18

ԳԼՈՒԽ 2: ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ 20

Հոդված 11. Մրցումների վայրը 20

Հոդված 12. Մրցումների անցկացման կարգը 21

Հոդված 13. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը 24

Հոդված 14. Խաղացանկը և անցկացման ժամկետները 25

Հոդված 15. Վիճարկում 26

ԳԼՈՒԽ 3: ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ 27

Հոդված 16. Սպասարկող անձնակազմի նշանակումը 27

Հոդված 17. Սպասարկման իրականացումը 27

Հոդված 18. Սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները 28

ԳԼՈՒԽ 4: ՖՈՒՏԶԱԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԹԻՄԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐԻ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ 29

Հոդված 19. Ֆուտզալիստների և թիմերի անձնակազմերի հայտավորումը և վերահայտավորումը 29

ԳԼՈՒԽ 5: ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 32

Հոդված 20. Խաղի անցկացման կարգը 32

Հոդված 21. Լռության րոպե, սոցիալական և հասարակական նշանակության, ռասիզմի դեմ պայքարի և արդար խաղի միջոցառումները 33

Հոդված 22. Չկայացած և անավարտ խաղերը 34

Հոդված 23. Թիմերի չներկայանալը խաղին, առաջնություններին մասնակցությունից հրաժարվելը կամ առաջնություններից հեռացվելը 37

Հոդված 24. Նախախաղային խորհրդակցությունը 40

Հոդված 25. Մարզադահլիճի հաշվի լուսատախտակը 40

Հոդված 26. Անվտանգության ապահովումը 41

ԳԼՈՒԽ 6: ՖՈՒՏԶԱԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԹԻՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ 42

Հոդված 27. Ֆուտզալիստների և թիմի անձնակազմի մասնակցությունը 42

Հոդված 28. Խաղի արձանագրություն 44

Հոդված 29. Ֆուտզալիստների փոխարինումները 45

ԳԼՈՒԽ 7: ՄԱՐԶԱՀԱԳՈՒՍՏԸ 46

Հոդված 30. Մարզահագուստի գույները 46

Հոդված 31. Խաղահամարները 46

Հոդված 32. Մարզահագուստի վրա տեղադրված գովազդը 47

Հոդված 33. Խաղի մարզահագուստների հաստատումը 47

ԳԼՈՒԽ 8: ՄԵԴԻԱ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳ 48

Հոդված 34. Խաղերի հեռարձակում 48

Հոդված 35. ԶԼՄ-ների հավատարմագրումը և տեղակայումը մարզադաշտում 48

ԳԼՈՒԽ 9: ԱԿՈՒՄԲԻ ԱՆՎԱՆՄԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ 49

Հոդված 36. Ակումբի ինքնության և իրավական խմբի կառուցվածքի փոփոխությունը 49

Հոդված 37. Ակումբի ինքնության (ակումբի անվանում, թիմի անվանում, տարբերանշան, գույներ, իրավաբանական հասցե) փոփոխությունը և դրա գրանցումը ՀՖՖ-ում 50

Հոդված 38. Իրավահաջորդություն 51

ԳԼՈՒԽ 10: ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 51

Հոդված 39. Պայմանագրի գրանցումը 51

Հոդված 40. Վեճերի լուծումը....51
Հոդված 41. Թիմերի մասնակցությունը ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին....52
Հոդված 42. Այլ դրույթներ....52
ՀԱՎԵԼՎԱԾ 1: ԽԱՂԱԴԱՇՏԻ ԳԾԱԳԻՐԸ....53

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՖՖ	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ՖԻՖԱ	Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա
ՈՒԵՖԱ	Ֆուտբոլի եվրոպական ասոցիացիաների միություն
ԻՖԱԲ	Ֆուտբոլի ասոցիացիանների միջազգային խորհուրդ
ՖԶԲԽ	Հայաստանի Ֆուտզալի Բարձրագույն խումբ
ՖԶԳԽ	Հայաստանի Ֆուտզալի Գավաթի խաղարկություն
Ակումբ	Մարզական առումով ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնակարգերին և սահմանված կիրառելի և վերաբերելի նորմերին ենթարկվող ֆուտբոլային մարզական ակումբ (թիմ), որը մասնակցում է կամ ցանկանում է մասնակցել ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող ֆուտբոլային մրցումներին
Ակումբի պաշտոնյա	Ակումբի աշխատակից, բացառությամբ ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի անդամների, ով ֆուտբոլային ակումբի հետ գտնվում է աշխատանքային հարաբերությունների մեջ և/կամ ներառված է ակումբի իրավական խմբի կառուցվածքում և/կամ գրանցված է ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման համակարգում՝ որպես ակումբի պաշտոնյա

Առաջնություն	Տվյալ մրցաշրջանի պրոֆեսիոնալ ֆուտզալի ԲԽ ակումբների միջև անցկացվող ՀՀ առաջնություն
Արտակարգ իրավիճակ/ Ֆորս-մաժոր	Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են հանդիպման մասնակցի և կազմակերպչի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), համաճարակները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են ֆուտբոլային հանդիպման՝ պատշաճ և ըստ նախատեսվածի կազմակերպմանը և/կամ անցկացմանը
ՖԶԲԽ Հովանավոր (գործընկեր)	ՀՖՖ-ի հետ ՖԶԲԽ-ին վերաբերող հովանավորչական (գործընկերական) պայմանագիր ստորագրած իրավաբանական անձ
Դոպինգ ստուգում	Վիճակահանության արդյունքում ընտրված առաջնության մասնակից խաղացողներին և ակումբներին իրազեկում՝ վիճակահանությամբ ընտրված խաղացողների մասին, տվյալ խաղացողներից կենսաբանական նմուշների ստացում և դրանց հետագա հետազոտություն՝ ֆուտբոլիստների օրգանիզմում խթանիչ և/կամ այլ արգելված միջոցների առկայության

	ստուգման համար, ինչն ուղեկցվում է համապատասխան փաստաթղթերի ստորագրմամբ
Թիմի անձնակազմ	Ակումբի աշխատակիցներ, այդ թվում՝ մարզչական, տեխնիկական և ղեկավար անձնակազմի անդամներ, ովքեր հայտավորված են՝ ՀՖՖ-ի պրոֆեսիոնալ մրցումներին մասնակցելու նպատակով
Խաղացանկ	Խաղային օրերի ժամանակացույց
Խաղաշրջան	Ֆուտբոլային տարվա կտրվածքով առաջին պաշտոնական խաղով մեկնարկող և վերջին պաշտոնական խաղով ավարտվող ժամանակաշրջան
Խաղի ժամանակահատված	Խաղասկզբից 2 ժամ առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը և խաղից 1 ժամ հետո ընկած ժամանակահատված
Խաղի կանոններ	«Ֆուտզալ խաղի» գործող կանոններ՝ ըստ ԻՖԱԲ-ի գործող կանոնների
Կանոնակարգ	ՀՖՖ պրոֆեսիոնա մրցումների անցկացման կանոնակարգ (2025-2026 մրցաշրջան)
Հանդիպման (խաղի) մասնակից	Ֆուտբոլիստ, թիմի անձնակազմ, ֆուտբոլային հանդիպումը սպասարկող անձնակազմ և հանձնակատար
Հայաստանի ազգային/տարբեր տարիքային հավաքականների անդամ	Ֆուտբոլիստներ, որոնք ստացել են պաշտոնական հրավեր և մասնակցել են ազգային/տարբեր տարիքային հավաքականների հավաքներին և/կամ խաղերին
Հեռարձակում	Ֆուտբոլային հանդիպման՝ մարզադաշտից տեսանկարահանման և եթերի տրամադրման, ինչպես նաև համացանցի միջոցով ուղիղ եթերի հեռարձակման ապահովում

ՀՖՖ Գործադիր կոմիտե	ՀՖՖ-ի կանոնադրությամբ նախատեսված կոլեգիալ կառավարման մարմին
ՀՖՖ Մրցավարական և տեսչական բաժին	Հանդիպման մրցավարներին և տեսուչին նշանակող մարմին
ՀՖՖ նույնականացման քարտի համար (ID)	Ֆուտբոլային օբյեկտների և սուբյեկտների անհատական համար, որը տրվում է Ֆուտբոլի կառավարման համակարգում գրանցվելիս
ՀՖՖ Ֆուտզալի բաժին	Ֆուտզալի մրցումները կազմակերպող և անցկացնող մարմին
Մարզադահլիճ	ՀՖՖ–ի կողմից ընդունված մարզական շինություն, որտեղ անցկացվում է ֆուտզալի հանդիպումը
Մրցաշրջան	Ժամանակաշրջան, որը մեկնարկում է օրացուցային տվյալ տարվա հուլիսի 1-ին և ավարտվում հաջորդ տարվա հունիսի 30-ին
Սպասարկող անձնակազմ	Մրցավար, երկրորդ մրցավար, երրորդ մրցավար, ժամանակաչափորդ, տեսուչ
Մրցավար	Խաղի ՀՖՖ-ի կողմից նշանակված մրցավար
2-րդ մրցավար	ՀՖՖ-ի կողմից նշանակված հանդիպման 2-րդ մրցավար
Մրցավարի օգնական	ՀՖՖ-ի կողմից նշանակված հանդիպման մրցավարների օգնականներ (երրորդ մրցավար և ժամանակաչափորդ)
Մրցումներ	ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցաշարեր՝ Ֆուտզալի Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնություն, Առաջին խմբի առաջնություն, Ֆուտզալի Հայաստանի Գավաթ, Ֆուտզալի Հայաստանի Սուպերգավաթ

Պաշտոնական խաղեր	Կազմակերպված ֆուտզալի շրջանակներում անցկացվող խաղեր՝ ազգային առաջնությունների, գավաթի խաղարկության, միջազգային ակումբային մրցաշարերի հանդիպումներ
Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ/ֆուտզալիստ (խաղացող)	Պրոֆեսիոնալ կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստ/ֆուտզալիստ, ով հայտավորված է տվյալ առաջնությանը մասնակցության նպատակով
Տեսուչ	ՀՖՖ Մրցավարի, 2-րդ մրցավարի, 3-րդ մրցավարի, ժամանկաչափորդի գործողությունները գնահատող ՀՖՖ-ի ներկայացուցիչ
Ֆուտբոլի կառավարման համակարգ (FMS)	Էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, որը հնարավորություն է տալիս կատարել բոլոր գործառույթները, որոնք ընդգրկում են ֆուտբոլային ենթակառուցվածքների, ֆուտբոլային ակումբների, ֆուտբոլիստների, մրցումների կազմակերպման և անցկացման, նախախաղային և հետխաղային տվյալների կառավարումը
Ֆուտբոլային սուբյեկտներ	Պրոֆեսիոնալ ֆուտզալում ներգրավված իրավաբանական և ֆիզիկական անձինք
Ֆուտզալ	Ֆուտբոլ մարզաձև, որը պետք է խաղալ համաձայն ԻՖԱԲ «Ֆուտզալ խաղի» կանոնների՝ թողարկված ՖԻՖԱ-ի և միջազգային ֆուտբոլային ասոցիացիաների խորհրդի ենթակոմիտեի համատեղ գործունեությամբ:

ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Կանոնակարգի առարկան, կիրառման շրջանակը և խնդիրները

1.01. Սույն կանոնակարգը սահմանում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող մրցումների կազմակերպման և անցկացման սկզբունքները, Ֆուտբոլային սուբյեկտների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և այլ ընթացակարգային հարցերը տվյալ մրցումների ընթացքում, կարգավորում է պրոֆեսիոնալ ֆուտզալի մրցումներին մասնակցող ակումբների իրավունքներն ու պարտականությունները:

1.02. Սույն կանոնակարգը վերաբերում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հովանու ներքո անցկացվող հետևյալ մրցաշարերին

- Ֆուտզալի Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնությանը (այսուհետև՝ ՖԶԲԽ),
- Ֆուտզալի Հայաստանի Գավաթի խաղարկությանը (այսուհետև՝ ՖԶԳԽ) և
- Սուպերգավաթի խաղարկությանը (այսուհետև՝ ՖԶՍԳԽ):

1.03. Կանոնակարգի խնդիրներն են՝

ա) Մրցումների կազմակերպման, անցկացման, ղեկավարման և հսկողության ընթացակարգերի սահմանումը,

բ) Մրցումների մասնակիցների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և ապահովումը,

գ) Մրցումների համակարգի համապատասխանեցումը ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի հիմնարար փաստաթղթերի պահանջներին:

Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները

2.01. Մրցումների նպատակն է՝

ա) ՀՀ տարածքում պրոֆեսիոնալ ֆուտզալի հետագա զարգացմանը նպաստելը,

բ) Պրոֆեսիոնալ ֆուտզալիստների վարպետության մակարդակի բարձրացմանը նպաստելը,

գ) Միջազգային մրցաշարերում ազգային հավաքականների և ակումբային թիմերի ելույթների որակային բարելավմանը նպաստելը,

դ) «Արդար խաղի» սկզբունքների արմատավորմանը և կենսագործմանը նպաստելը:

2.02. Մրցումների խնդիրներն են՝

ա) Բարձրագույն խմբի առաջնության թիմերի դասակարգումը՝ ըստ առաջնության արդյունքների,

բ) Ֆուտզալի մասսայականացումը,

գ) Մրցաշրջանի մրցանակակիրների որոշումը հետևյալ դասակարգմամբ՝

- Ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնության լավագույն ռմբարկու,
- Ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնության լավագույն ֆուտզալիստ,
- Ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնության լավագույն մարզիչ,

Հոդված 3. Մրցումների բարեվարքային համակարգը

3.01. Մրցումների բարեվարքային համակարգը ապահովելու նպատակով՝

ա) արգելվում է միևնույն իրավաբանական կամ ֆիզիկական անձի կամ նրա հետ փոխկապակցված անձանց կողմից ֆինանսավորվող մեկից ավելի ակումբների մասնակցությունը ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ ֆուտզալի մրցումների տվյալ առաջնությանը,

բ) արգելվում է որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի ուղղակի կամ անուղղակի միաժամանակյա ցանկացած ներգրավվածությունը ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ ֆուտզալի մրցումների տվյալ առաջնությանը մասնակից մեկից ավելի ակումբների վարչական և/կամ մարզական ղեկավարմանը,

գ) արգելվում է որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի ցանկացած վերահսկողությունը կամ այլ կերպ դրսևորվող ազդեցությունը ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ ֆուտզալի մրցումների տվյալ առաջնությանը մասնակից մեկից ավելի ակումբների նկատմամբ:

3.02. Արգելվում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ ֆուտզալի մրցումներին մասնակից ակումբների և/կամ ֆուտբոլային բոլոր սուբյեկտների կողմից պայմանավորված խաղեր կազմակերպելը, կազմակերպման փորձ կատարելը, հանդիպումների արդյունքի վրա նպատակաուղղված ցանկացած գործողություն կատարելը կամ այդ արարքների մասին ՀՖՖ-ին չհայտնելը:

3.03. Սույն հոդվածի 3.01. մասի «ա» կետի իմաստով անձի փոխկապակցված լինելու հանգամանքը որոշում է ՀՖՖ-ն՝ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրության, ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կանոնակարգերի դրույթները և իր տրամադրության տակ առկա փաստական տվյալները:

Հոդված 4. ՀՖՖ գործառույթները

4.01. Առաջնությունների կազմակերպումն ու վերահսկումը իրականացվում է ՀՖՖ-ի կողմից՝ հիմնվելով ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կողմից ճանաչված, առաջնությունների հետ կապված բացառիկ իրավասությունների վրա:

4.02. ՀՖՖ-ն իրականացնում է մրցումների ընդհանուր ղեկավարումը, մասնավորապես՝

- հաստատում է մրցումների անցկացման կանոնակարգը և խաղացանկերը,
- սահմանում և հաստատում է մրցումների մասնակցության մուտքավճարների չափերը,
- հաստատում է մրցումների մասնակից ֆուտզալային սուբյեկտների միջև իրավահարաբերությունները կարգավորող փաստաթղթերը (աշխատանքային, ֆուտզալիստների տեղափոխման պայմանագրերը և այլն),
- հաստատում է թիմերի, ֆուտզալիստների և անձնակազմի գրանցումը,
- հաստատում է թիմերի, դրանց ֆուտզալիստներ և թիմերի անձնակազմի հայտավորումը,
- հաստատում է մրցումները սպասարկող մրցավարների և տեսուչների կազմը,
- կազմակերպում է խաղերը և իրականացնում դրանց նկատմամբ հսկողությունը,
- կազմակերպում և տնօրինում է խաղերի հեռարձակումը,

- ամփոփում է հանդիպումների արդյունքները,
- հաստատում է առաջնությունների արդյունքները և իրականացնում մրցանակակիրների պարգևատրումը,
- հաստատում է Հայաստանի Բաձրագույն խմբի առաջնության և Հայաստանի Գավաթի խաղարկության պաշտոնական գնդակը և բոլոր մասնակից ակումբներին խաղաշրջանի մեկնարկից նվազագույնը 10 օր առաջ տրամադրում է գնդակներ: Տվյալ առաջնության բոլոր հանդիպումները անցկացվում են ՀՖՖ-ի կողմից տրամադրված պաշտոնական գնդակներով,
- յուրաքանչյուր մրցաշրջանից առաջ հաստատում և ակումբներին է ուղարկում ակումբների՝ առաջնություններին մասնակցության հավաստագիր ներկայացնելու կարգը,
- հաստատում է խաղի պաշտոնյաների վարձատրության կարգը,
- իրականացնում է սույն կանոնակարգով նախատեսված դեպքերում և կարգով հանդիպումների հետաձգումը (դրանց անցկացման ամսաթվի, մեկնարկի ժամանակի և վայրի փոփոխություն),
- իրականացնում է վերահսկողություն կիրառելի և վերաբերելի կանոնակարգերի շրջանակներում,
- ապահովում է Ֆուտբոլի կառավարման համակարգում հանդիպումների բոլոր տվյալների մուտքագրումը,
- ապահովում է դոպինգ հսկողություն իրականացնելու հնարավորության կարգը, իրականացնում է մրցումների կազմակերպումից բխող այլ գործառույթներ,
- տրամադրում է թիմերի և մրցավարների համար նախատեսված հանդերձարաններ,
- տրամադրում է նախախաղային խորհրդակցության համար նախատեսված սենյակ,
- տրամադրում է սպասարկող մրցավարական անձնակազմի համար ջուր,
- ապահովում է բժշկի և ոստիկանության աշխատակիցների (համազգեստով), և/կամ անվտանգության աշխատակիցների, կարգադրիչների ներկայությունը և վերջիններիս աշխատանքային պարտականությունների կատարումը,

- իրականացնում է մրցումների կազմակերպումից բխող այլ գործառույթներ:

Հոդված 5. Մրցաշրջանի ընթացքում ակումբների պարտականությունները

5.01. Մրցաշրջանի ընթացքում ակումբները, ակումբի ֆուտզալիստները, թիմի անձնակազմը և պաշտոնյաները պարտավոր են՝

ա) անշեղորեն հետևել գործող ԻՖԱԲ «Ֆուտզալ խաղի» կանոններին, ՀՖՖ Կանոնադրությանը, կանոնակարգերի դրույթներին և ընդունել, կատարել ՀՖՖ Գործադիր կոմիտեի, ՀՖՖ վարչական անձնակազմի, ՀՖՖ այլ մարմինների կողմից ընդունված և պատշաճ կերպով ծանուցված որոշումները, շրջաբերականները: Պատշաճ է համարվում ներքոնշյալ՝ առձեռն՝ ակումբի ղեկավար անձնակազմի համապատասխան պաշտոնատար անձի ստորագրությամբ, փոստով, ակումբի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով, ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով կամ ՀՖՖ պաշտոնական վեբ կայքում (www.ffa.am) հրապարակման միջոցով ծանուցումը, ընդ որում, պատշաճ է համարվում նշված միջոցներից ինչպես մեկով, այնպես էլ մի քանիսով կամ բոլորով կատարված ծանուցումը: Առանձին դեպքերում սույն և ՀՖՖ այլ կանոնակարգերով կարող են սահմանվել այդ կանոնակարգ(եր)ի շրջանակներում ծանուցման հիմնական եղանակ(ներ),

բ) տեղեկացնել ՀՖՖ-ին ֆուտբոլային միջազգային կարգապահական կամ ազգային պետական դատարաններում ցանկացած վարույթի և դրա արդյունքների մասին, որի շրջանակներում ակումբները, ֆուտբոլիստները, թիմի անձնակազմը կամ նրանց պաշտոնյաները ազգային կամ միջազգային մակարդակով ներգրավված են հանդիպման/հանդիպումների արդյունքի վրա նպատակաուղղված ցանկացած գործողության կազմակերպման և ազդեցության մեջ անկախ նրանից՝ ակումբը կամ նրա պաշտոնյան իրեն պատասխանատու կամ մեղավոր համարում է, թե՝ ոչ,

գ) եթե ակումբի կողմից ներկայացված փաստաթղթերի քննության արդյունքում ՀՖՖ-ն եզրակացնում է, որ ակումբի և/կամ նրա պաշտոնյայի կողմից ուղղակի կամ անուղղակի իրականացվել է ազգային և/կամ միջազգային հանդիպման/հանդիպումների արդյունքի/արդյունքների գործողություն՝ արդյունքի վրա նպատակաուղղված կազմակերպման և ազդեցության ցանկացած գործողություն, ապա ՀՖՖ-ն կարող է արգելել այդ ակումբին հանդես գալ իր հովանու ներքո անցկացվող մրցումներում: Նման արգելանքը կիրառելի է միայն մեկ ազգային ֆուտբոլային մրցաշրջանի համար: Նման

որոշում կայացնելիս՝ ՀՖՖ-ն կարող է, բայց պարտավորված չէ, հիմնվել ազգային կամ միջազգային սպորտային իրավասու մարմինների, արբիտրաժային դատարանի կամ պետական դատարանների որոշումների վրա: ՀՖՖ-ն կարող է ձեռնպահ մնալ ակումբին մրցումներին մասնակցելու իրավունքից զրկելուց, եթե ՀՖՖ-ն համոզված է, որ ազգային կամ միջազգային մարզական մարմնի, արբիտրաժային դատարանի կամ պետական դատարանի կողմից նույն փաստական հանգամանքների հիման վրա ընդունված որոշումով ակումբն արդեն իսկ չի կարողանա մասնակցել ՀՖՖ մրցումներին:

դ) դաշտի տեր ակումբը Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնության յուրաքանչյուր խաղի անցկացման համար պարտավոր է տրամադրել առաջնության համար հաստատված 3 գնդակ:

ե) վարել ֆուտզալիստների ստացած դեղին և կարմիր քարտերի հաշվառումը և ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի համաձայն, խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ կիրառել Կանոնակարգով նախատեսված պատժամիջոցները՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշման:

Մրցումներին մասնակցող ֆուտզալիստ(ներ)ի/թիմի անձնակազմի անդամ(ներ)ի՝ խաղի ժամանակահատվածում կարմիր քարտ ստանալու դեպքում վերջիններս ավտոմատ կերպով բաց են թողնում նվազագույնը մեկ խաղ՝ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված կարգով, մինչև ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն կկայացնի որոշում բաց թողնվելիք խաղերի վերջնական քանակի և ժամկետի վերաբերյալ:

5.02. Ակումբները պատասխանատու են՝

ա) խաղի արձանագրությունում նշված ֆուտզալիստների և թիմի անձնակազմի՝ խաղին մասնակցելու իրավասության համար (խաղի արձանագրությունում նշված լինելը համարվում է խաղին մասնակցություն),

բ) խաղի ժամանակահատվածում ֆուտզալիստների, ակումբի պաշտոնյաների, թիմի անձնակազմի անդամների, ինչպես նաև ակումբի երկրպագուների՝ ՀՖՖ կանոնակարգերով արգելված, անթույլատրելի, ոչ սպորտային վարքագծի և գործողությունների համար,

գ) մարզադաշտում գտնվող շինությունների, հանդերձարանների և այլ գույքի պատշաճ օգտագործման և դրանց՝ մինչև օգտագործումն առկա վիճակի պահպանման համար,

դ) ՀՖՖ-ին պաշտոնապես ոչ հավաստի տեղեկություն ներկայացնելու համար:

5.03. Ակումբներին արգելվում է՝

ա) միջամտել խաղը սպասարկող անձնակազմի գործողություններին, այն է՝ կատարել այնպիսի գործողություն կամ դրսևորել անգործություն, որը խոչընդոտում է կամ կարող է խոչընդոտել խաղը սպասարկող անձնակազմի բնականոն գործունեությանը կամ կարող է ազդել խաղի մեկնարկի, ընթացքի կամ ելքի վրա,

բ) ներկայացնել ՀՖՖ-ն կամ օգտագործել ՀՖՖ-ի դրոշը և խորհրդանշանը (տարբերանշանը)՝ բացառությամբ ՀՖՖ-ի կողմից տրված գրավոր թույլտվության առկայության դեպքերի,

գ) մրցումների շրջանակներում և հրապարակային գործողություններ կատարելիս օգտագործել ակումբի այնպիսի անվանում կամ խորհրդանշան (տարբերանշան) (այդ թվում՝ կոմերցիոն գործընկերոջ անվանում), որը ՀՖՖ-ում գրանցված չէ տվյալ ակումբի անվամբ:

Հոդված 6. Մրցումներին մասնակցության չափանիշները

6.01. Մրցումներին կարող են մասնակցել այն ակումբները, որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, ընդունում են ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի հիմնարար սկզբունքները, կանոնադրություններն ու կանոնակարգերը, ՀՖՖ-ի նկատմամբ չունեն չկատարված պարտավորություն(ներ), այդ թվում՝ չվճարված տուգանք կամ չմարված կարգապահական տույժ, և պարտավորվում են կատարել վերոնշյալ կազմակերպությունների, ինչպես նաև սույն կանոնակարգի պահանջները:
Սույն կետի իմաստով ՀՖՖ-ն իրավասու է իր նկատմամբ չկատարված պարտավորությունների առկայության դեպքում թույլատրել ակումբ(ներ)ին մասնակցել Մրցումներին՝ սահմանելով պարտավարությունների կատարման ողջամիտ ժամկետ, որը չպետք է լինի ավելի, քան տվյալ մրցման տևողության 50%-ը:
6.02. Բարձրագույն խմբի առաջնությանը կարող է մասնկացել առավելագույնը 8 թիմ, որոնք նախորդ մրցաշրջանում մասնակցել են Բարձրագույն խմբի առաջնությանը: Բարձրագույն խմբի առաջնության մասնակից թիմերի քանակը կարող է փոփոխվել մրցաշրջանի մեկնարկից առաջ՝ ՀՖՖ-ի ֆուտզալի կոմիտեի որոշմամբ: Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնության մրցաշրջանի արդյունքներով մրցաշարային աղյուսակում վերջին տեղը զբաղեցրած թիմը կորցնում է Բարձրագույն խմբի հաջորդ մրցաշրջանում հանդես գալու իր իրավունքը և հաջորդ մրցաշրջանում կարող է

մասնակցել միայն Առաջին խմբի առաջնությանը: Առաջին խմբի առաջնության մրցաշրջանի արդյունքներով մրցաշարային աղյուսակում առաջին տեղը զբաղեցրած թիմը հաջորդ մրցաշրջանում իրավունք է ստանում մասնակցելու Հայաստանի Ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնությանը:

6.03. ՀՀ Ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակցության հայտ կարող են ներկայացնել նաև ՀՀ Ֆուտզլաի Առաջին խմբի նախորդ առաջնությանը մասնակից ակումբները ովքեր կայուն ֆինանսական եկամուտների մասին տեղեկանք կներկայացնեն ՀՖՖ Ֆուտզալի բաժին, հայտը կքննարկվի Ֆուտզալի բաժնի կողմից:

6.04. Եթե Սուպերգավաթի մասնակից որևէ թիմ հրաժարվում է մասնակցությունից, ապա Սուպերգավաթը հանձնվում է մրցակից թիմին: Եթե երկու թիմերն էլ հրաժարվում են մասնակցությունից, ապա ՀՖՖ-ն իրավունք ունի Սուպերգավաթի անցկացման վերաբերյալ հատուկ որոշում կայացնել:

Հոդված 7. Մրցումներին մասնակցության համար դիմելու կարգը

7.01. Մրցումներին մասնակցելու համար մասնակից ակումբները պետք է անցնեն հավաստագրման գործընթաց Ֆուտբոլի կառավարման համակարգում սահմանված ժամկետներում՝ ըստ պահանջվող փաստաթղթերի: Հաջորդ մրցաշրջանի 2025-26 Մրցաշրջանի Բարձրագույն խմբի առաջնության հավաստագրման գործընթացը սկսվում է հուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 10-ը, իսկ Հայաստանի Գավաթի խաղարկության Հավաստագրումը սկսում է 2025 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2026 թվականի հունվարի 19-ը՝ բացառությամբ ֆորս մաժորային իրավիճակների: Հավաստագրման վերաբերյալ մանրամասները՝ պահանջվող փաստաթղթերի ցանկը, վերջնաժամկետներն ու կարգը սահմանվում են ՀՖՖ Ֆուտզալի բաժնի կողմից և հավասատգրվելուց առնվազն երեք օր առաջ շրջաբերական նամակով ուղարկվում են Հայաստանի Բարձարագույն խմբի առաջնության, Հայաստանի Գավաթի խաղարկության մասնակից ակումբներին:

7.02. Եթե ակումբի կողմից Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակցելու համար ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Ֆուտբոլի կառավարման համակարգի սահմանված պահանջներին, ապա դրանք չեն ընդունվում ՀՖՖ Ֆուտզալի բաժնի կողմից, որի մասին ակումբը ծանուցվում է Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով, որից հետո ակումբը կարող է համալրել փաստաթղթերը և/կամ ուղղել առկա այլ սխալները Ֆուտբոլի կառավարման համակարգում սահմանված ժամկետների և

պահանջներին համապատասխան: Ֆուտբոլի կառավարման համակարգում սահմանված ժամկետներից դուրս ներկայացված հավաստագրման հայտերը մերժվում են ՀՖՖ Ֆուտզալի բաժնի կողմից, և տվյալ ակումբը կարող է զրկվել տվյալ առաջնությանը մասնակցելու իրավունքից, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը շրջաբերականով ուղարկվում է մասնակից ակումբների պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեներին:

Հոդված 8. Մրցումների մասնակցության մուտքավճարը

8.01. Բարձրագույն խմբի առաջնության մասնակցության մուտքավճարը կազմում է 500.000 ՀՀ դրամ (հինգ հարյուր հազար ՀՀ դրամ):

8.02. Բարձրագույն խմբի առաջնության մուտքավճարի մուծման վերջնաժամկետն է տվյալ առաջնության առաջին խաղից 1 օր շուտ:

8.03. Հայաստանի Ֆուտզալի Գավաթի մասնակցությունը անվճար է:

8.04. Սույն հոդվածով սահմանված վճարումները կատարվում են անկանխիկ եղանակով՝ ՀՖՖ բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով, ընդ որում, փոխանցումը համարվում է կատարված ՀՖՖ հաշվեհամարին մուտքագրվելու օրը:

Հոդված 9. «Արդար խաղը» և գնահատման կարգը

9.01. Պրոֆեսիոնալ ֆուտզալի մրցումների շրջանակներում անցկացվող բոլոր խաղերը կազմակերպվում են ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կանոնադրություններով նախատեսված «Արդար խաղի» սկզբունքների համաձայն:

9.02. Յուրաքանչյուր խաղի ավարտից հետո խաղի տեսուչի արդյունքում գնահատվում է տվյալ խաղի մասնակից թիմերից յուրաքանչյուրի «Արդար խաղը»:

9.03. «Արդար խաղի» գնահատումը կատարվում է 1-10 միավորային համակարգով՝ հետևյալ չափանիշների հիման վրա.

ա) տվյալ խաղի կարմիր և դեղին քարտերի քանակ,

բ) տվյալ խաղի մրցավարի նկատմամբ հարգալից վերաբերմունք,

գ) տվյալ խաղի մրցակցի նկատմամբ հարգալից վերաբերմունք,

դ) տվյալ խաղի թիմերի անձնակազմերի պահվածք,

ե) տվյալ խաղի հանդիսականների պահվածք:

9.04. Առաջնությանը մասնակից թիմերի «Արդար խաղի» դասակարգումը կատարվում է տարեկան մեկ անգամ՝ խաղաշրջանի ընթացքում վաստակած գնահատականների հանրագումարի արդյունքի հիման վրա:

Հոդված 10. Պարգևատրումը

10.01. Բարձրագույն խմբի առաջնության ավարտից հետո ՀՖՖ-ն պարգևատրում է բոլոր մրցանակակիրներին:

10.02. ՀՖՖ Ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնության առաջին տեղը զբաղեցրած թիմին շնորհվում է տվյալ մրցաշրջանի «Հայաստանի չեմպիոն» կոչումը, իսկ ակումբը պարգևատրվում է հետևյալ մրցանակներով.

ա) Ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնության գավաթ,

բ) 10,000,000 (տասը միլիոն) ՀՀ դրամ,

գ) 25 հատ ոսկե մեդալ:

10.03. ՀՖՖ Ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնության երկրորդ տեղը զբաղեցրած թիմը պարգևատրվում է 25 հատ արծաթե մեդալներով և 6,000,000 (վեց միլիոն) ՀՀ դրամով:

10.04. ՀՖՖ ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնության երրորդ տեղը զբաղեցրած թիմը պարգևատրվում է 25 հատ բրոնզե մեդալներով և 4,000,000 (չորս միլիոն) ՀՀ դրամով:

10.05. Հայաստանի Գավաթի խաղարկության եզրափակչում հաղթող թիմին շնորհվում է «Հայաստանի գավաթակիր» կոչումը, իսկ ակումբը պարգևատրվում է հետևյալ մրցանակներով.

ա) Հայաստանի Գավաթ,

բ) 25 հատ ոսկե մեդալ:

10.06. Հայաստանի Գավաթի խաղարկության եզրափակչում պարտվող թիմը, թիմի ֆուտզալիստները, թիմի անձնակազմը և ակումբի պաշտոնյաները պարգևատրվում են 25 հատ արծաթե մեդալներով:

10.07. Հայաստանի Գավաթի խաղարկության եզրափակիչ խաղը սպասարկող անձնակազմի անդամները պարգևատրվում են ՀՖՖ-ի դիպլոմներով:

10.08. Հայաստանի Բարձարագույն խմբի առաջնության «Արդար խաղի» առավել շատ միավորներ հավաքած թիմը պարգևատրվում է ՀՖՖ-ի համապատասխան մրցանակով, որը հանձնվում է տվյալ թիմի հաջորդ մրցաշրջանի առաջին պաշտոնական խաղից առաջ:

10.09. Սույն կանոնակարգով սահմանված մրցումների համար նախատեսված բոլոր գավաթների բնօրինակները, որոնք ցուցադրվում են պարգևատրման և հանդիսավոր արարողությունների ժամանակ, հանդիսանում են ՀՖՖ սեփականությունը:

10.10. Հայաստանի 2025 թվականի լավագույն ֆուտզալիստի և մարզչի քվեարկությունն անցկացվում է ՀՖՖ Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից: Քվեարկությանը մասնակցում են լրատվամիջոցների ներկայացուցիչները: Լավագույն ֆուտզալիստը և մարզիչը պարգևատրվում են հուշանվերով և 1-ական միլիոն ՀՀ դրամով:

10.11. Հայաստանի Բարձրագույն խմբի 2025/2026 մրցաշրջանի լավագույն ֆուտզալիստը և մարզիչը որոշվում են ՀՖՖ Ֆուտզալի կոմիտեի անդամների քվեարկության միջոցով: Բարձրագույն խմբի առաջնության լավագույն ֆուտզալիստը և մարզիչը պարգևատրվում են հուշանվերով և 700.000-ական ՀՀ դրամով:

10.12. 2025/2026 մրցաշրջանի Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնության 2 փուլերի արդյունքում առավել շատ թվով գոլեր խփած ֆուտզալիստը, որպես լավագույն ռմբարկու, պարգևատրվում է «Լավագույն ռմբարկու» մրցանակով և 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամով: Այն պարագայում, եթե մեկից ավելի ֆուտզալիստներ խփել են նույն քանակի գոլեր, ապա «Լավագույն ռմբարկու» մրցանակով պարգևատրվում են վերոնշյալ բոլոր ֆուտզալիստները:

10.13. Բարձրագույն խմբի առաջնության մասնակիցների համար ՀՖՖ նախագահի կամ Գործադիր կոմիտեի որոշմամբ կարող են սահմանվել այլ պարգևատրումներ:

ԳԼՈՒԽ 2: ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Հոդված 11. Մրցումների վայրը

11.01. Բարձրագույն խմբի առաջնության բոլոր խաղերը տեղի են ունենում ՀՖՖ Տեխնիկական կենտրոն/Ֆուտբոլի ակադեմիայի մարզադահլիճում: ՀՖՖ Ֆուտզալի Բաժնի որոշմամբ առաջնության խաղերը կարող են տեղափոխվել այլ մարզադահլիճ:

11.02. Յուրաքանչյուր խաղի համար տվյալ մարզադահլիճի պատրաստ լինելը որոշում է խաղի մրցավարը նախախաղային խորհրդակցության ժամանակ՝ հիմք ընդունելով ՀՖՖ կանոնակարգերով սահմանված պահանջները:

11.03. Խաղի օրն առաջացած արտակարգ իրավիճակների/ֆորս մաժորի, ինչպես նաև տվյալ հանդիպմանը մարզադահլիճի՝ ցանկացած այլ պատճառով պատրաստ չլինելու դեպքում, խաղի մրցավարը՝ հիմք ընդունելով գործող ԻՖԱԲ «Ֆուտզալ խաղի» կանոնները, ՀՖՖ Ենթակառուցվածքային և ՀՖՖ Պրոֆեսիոնալ Ֆուտզալի մրցումների անցկացման կանոնակարգերի պահանջները, կայացնում է վերջնական որոշում խաղը տվյալ մարզադահլիճում անցկացնելու, չանցկացնելու կամ խաղասկիզբը հետաձգելու վերաբերյալ: Տվյալ իրավիճակի ի հայտ գալու դեպքում՝ խաղի տեսուչը հրավիրում է արտակարգ ժողով՝ մրցավարի և մասնակից թիմերի մասնակցությամբ, որի ընթացքում, նախապես քննարկելով ՀՖՖ ֆուտզալի բաժնի հետ, մրցող թիմերին տեղեկացվում է կայացված որոշման մասին:

11.04. Մարզադահլիճում պետք է բարձրացված լինեն ՀՀ-ի, ՀՖՖ-ի, Բարձրագույն խմբի առաջնության և Հայաստանի Գավաթի խաղարկության դրոշները:

Հոդված 12. Մրցումների անցկացման կարգը

12.01. Բարձրագույն խմբի առաջնությունն անցկացվում է 2 փուլով՝ կանոնավոր առաջնություն և փլեյ-օֆֆ:

12.02. Կանոնավոր առաջնությունն անցկացվում է շրջանաձև՝ 2 շրջանով, որտեղ մասնակից բոլոր թիմերը մրցում են միմյանց հետ՝ ի հայտ բերելու 1-8 տեղերը զբաղեցրած թիմերին:

12.03. Փլեյ-օֆֆ փուլն անցկացվում է օլիմպիական մրցակարգով, որտեղ մրցող թիմերը բաժանվում են զույգերի՝ ըստ 1-ին փուլում մրցաշարային աղյուսակում զբաղեցրած դիրքերի:

12.04. Փլեյ-օֆֆ փուլը սկսվում է 1\4 եզրափակչից, որին մասնակցում են առաջնության 1-ին փուլում 1-ից 8-րդ տեղերը զբաղեցրած թիմերը:

12.05. 1-ին փուլից հետո մրցաշարային աղյուսակի 1-ին տեղը զբաղեցրած թիմը 1/4 եզրափակչում մրցում է 8-րդ տեղը զբաղեցրած թիմի հետ, 2-րդը՝ 7-րդի, 3-րդը՝ 6-րդի, իսկ 4-րդը՝ 5-րդի հետ:

12.06. Փլեյ-օֆֆ փուլի կիսաեզրափակչում առաջնության առաջին փուլում առավել բարձր տեղը զբաղեցրած թիմը մրցում է մրցաշարային աղյուսակում առավել ցածր տեղ զբաղեցրած թիմի հետ:

12.07. Փլեյ-օֆֆ փուլում զույգերի հաղթող թիմը որոշվում է 3 խաղերի արդյունքում: Եթե որևէ թիմ երկու խաղերի արդյունքում գրանցում է 2 հաղթանակ, ապա 3-րդ խաղը չի անցկացվում:

12.08. Եթե փլեյ-օֆֆ փուլում զույգերի միջև կայացած առաջին խաղն ավարտվում է թիմերից մեկի, իսկ երկրորդ խաղը՝ մյուս թիմի հաղթանակով, ապա զույգի հաղթողը որոշվում է 3-րդ խաղի արդյուքում՝ անկախ առաջին երկու հանդիպումների ընթացքում խփած և բաց թողած գոլերի հաշվարկից:

12.09. Փլեյ-օֆֆ փուլում որևէ խաղի հիմնական ժամանակում ոչ ոքի գրանցվելու դեպքում տվյալ խաղի հաղթողին որոշելու համար խաղի ավարտից հետո նշանակվում է

10 րոպե լրացուցիչ ժամանակ՝ երկու խաղակես (5+5 րոպե տևողությամբ՝ առանց ընդմիջման): Լրացուցիչ խաղաժամանակում հավասար արդյունքի դեպքում, գործող ԻՖԱԲ «Ֆուտզալ խաղի» կանոնների համաձայն՝ նշանակվում է հետխաղյա 6 մետրանոց հարվածաշար:

12.10. Առաջին, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում 3-րդ խաղը տեղի է ունենում առաջին փուլում ավելի բարձր տեղ գրված թիմի հարկի տակ:

12.11. 1/2 եզրափակչի զույգերի հաղթող թիմերը հանդիպում են եզրափակչում միմյանց հետ ՀՀ ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնության հաղթողին որոշելու համար:

12.12. 1/2 եզրափակչի զույգերի պարտվող թիմերը հանդիպում են միմյանց հետ ՀՀ ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնության 3-րդ տեղի թիմին որոշելու համար:

12.13. Պլեյ-օֆֆ փուլի բոլոր մրցափուլերը անցկացվում են միևնույն մրցակարգով:

12.14. 1-ին փուլի բոլոր միավորները, խփած և բաց թողած գնդակները, ինչպես նաև ֆուտզալիստների և անձնակազմի անդամների ստացած դեղին և կարմիր քարտերը 2-րդ փուլում չեղյալ են համարվում՝ բացառությամբ առաջին փուլում ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված որակազրկումների:

12.15. Պլեյ-օֆֆ փուլում երկու դեղին քարտ, ինչպես նաև կարմիր քարտ ստանալը առաջացնում է մեկ խաղով որակազրկում տվյալ ֆուտզալիստի համար՝ բացառությամբ ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված որակազրկումների:

12.16. ՀՖՖ հովանու ներքո անցկացվող ֆուտբոլի բոլոր առաջնությունների շրջանակներում ստացած դեղին և կարմիր քարտերը չեն հաշվարկվում ֆուտզալի Բարձրագույն խմբի շրջանակներում՝ և հակառակը բացառությամբ ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված որակազրկումների:

12.17. Հայաստանի Գավաթի խաղարկության և Սուպերգավաթի խաղարկության շրջանակներում անցկացվող հանդիպումների կազմակերպման կարգի վրա տարածվում են Հայաստանի Բարձրագույն խմբի հանդիպումների կազմակերպման կանոնները, եթե սույն կանոնակարգով այլ դրույթներ սահմանված չեն:

12.18. Հայաստանի Գավաթի խաղարկության եզրափակչի և Սուպերգավաթի խաղարկության կազմակերպման և անցկացման պատասխանատուն ՀՖՖ Ֆուտզալի բաժինն է:

12.19. Հայաստանի Ֆուտզալի Գավաթի 2026 թվականի խաղարկությունը անցկացվում է Օլիմպիական մրցակարգով:

12.20. ՖԶԳԽ մասնակից թիմերի դիրքերը բոլոր մրցափուլերում որոշվում է կույր վիճակահանությամբ:

12.21. ՖԶԲԽ մասնակից թիմերը մրցապայքարը սկսում են 1/8 եզրափակիչ փուլից, ՖԶԱԽ մասնակից թիմերը 1/16 եզրափակիչ փուլից, իսկ մնացած թիմերը մրցածայքարը սկսում են նախնական փուլից:

12.22. ՖԶԳԽ խաղերը անցկացվում են 1 խաղով:

12.23. ՖԶԳԽ խաղարկությանը կարող են մասնակցել առավելագույնը 32 թիմ:

12.24. ՖԶԳԽ խաղի հիմնական ժամանակին հավասարության դեպքում նշանակվում է 6 մետրանոց հարվածաշար՝ ըստ ԻՖԱԲ «Ֆուտզալ խաղի կանոններ»-ի:

12.25. 1/8 եզրափակչից սկսած խաղի հիմնական ժամանակի ավարտին հավասարության դեպքում թիմերը կխաղան լրացուցիչ ժամանակ 5+5 րոպե ՝ ֆուտզալ խաղի կանոնների համաձայն:

12.26. Հայաստանի Սուպերգավաթը անցկացվում է 2 թիմերի միջև, կույր վիճակահանությամբ, որը անցկացվում է Սուպերգավաթի խաղարկության մեկնարկից 14 օր առաջ ՀՖՖ Ֆուտզալի բաժնի կողմից:

12.27. 2025 Թվականի Հայաստանի Սուպերգավաթին մասնակցում են՝

- 2024-2025 Մրցաշրջանի Հայաստանի Ֆուտզալի Բարձրագույն խմբի հաղթող
- 2025 թվականի Հայաստանի Ֆուտզալի Գավաթակիր

12.28. Եթե ՀՀ Ֆուտզալի Բարձրագույն խմբի հաղթող թիմը հանդիսանում է նաև Հայաստանի Գավաթակիր ապա Սուպերգավաթի խաղարկությանը մասնակցում է ՀՀ Ֆուտզալի Գավաթի եզրափակչին մասնակցած՝ պարտված թիմը:

12.29. Հայաստանի Գավաթի խաղարկության եզրափակչից և Սուպերգավաթի խաղարկությունից երկու օր առաջ ՀՖՖ Ֆուտզալի բաժինը կազմակերպում է հանդիպում մասնակից ակումբների հետ, որի ընթացքում ՀՖՖ Ֆուտզալի բաժինը կարող է պատասխանատվություն սահմանել մասնակից ակումբների համար՝ տվյալ խաղի պատշաճ կազմակերպումն ու անցկացումն ապահովելու համար:

Հոդված 13. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը

13.01. Բարձրագույն խմբի առաջնության 1-ին փուլի մրցաշարային աղյուսակում թիմերը դասակարգվում են ըստ վաստակած միավորների:

13.02. Յուրաքանչյուր խաղի արդյունքներով գրանցած հաղթանակի համար թիմին շնորհվում է 3 միավոր, ոչ- ոքիի համար՝ 1 միավոր, իսկ պարտության դեպքում միավոր չի շնորհվում:

13.03. Բարձրագույն խմբի առաջնության 1-ին փուլի Մրցաշարային աղյուսակում երկու և ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում թիմերի դասակարգման ժամանակ առավելությունն՝ ըստ ստորև նշված հերթականության, տրվում է այն թիմին, որը՝

ա) հավակնորդ թիմերի միջև խաղերում վաստակել է ավելի շատ միավոր,

բ) հավակնորդ թիմերի միջև խաղերում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,

գ) հավակնորդ թիմերի միջև խաղերում խփել է ավելի շատ գոլ,

դ) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում ունի ավելի շատ հաղթանակ,

ե) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում խփել է ավելի շատ գոլ

զ) տվյալ առաջնության բոլոր հանդիպումներում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,

է) տվյալ առաջնությունում ստացել է ավելի քիչ կարմիր քարտ,

ը) տվյալ առաջնությունում ստացել է ավելի քիչ դեղին քարտ,

թ) ունի «Արդար խաղ»-ի առավել բարձր ցուցանիշ,

ժ) ընտրվել է վիճակահանությամբ:

Հոդված 14. Խաղացանկը և անցկացման ժամկետները

14.01. Ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնության Մրցումների խաղացանկը կազմվում է Բերգերի համակարգով և հաստատվում է ՀՖՖ ֆուտզալի բաժնի կողմից: Խաղաշրջանի մեկնարկից առնվազն 10 օր առաջ ՀՖՖ Ֆուտզալի բաժինը հաստատում է սույն կանոնակարգով սահմանված մրցումների բոլոր մրցափուլերի օրերը և մարզադահլիճ/ները, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը շրջաբերականով ուղարկվում է մասնակից ակումբների պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեների և/կամ Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով: Մրցափուլերի օրերը և մարզադահլիճ/ները կարող են փոփոխվել միայն ՀՖՖ Ֆուտզալի բաժնի որոշմամբ:

14.02. Մրցափուլերի օրերի հիման վրա՝ ՀՖՖ ֆուտզալի բաժինը խաղաշրջանի մեկնարկից առնվազն 7 օր առաջ նշանակում է առաջին և երկրորդ մրցափուլերի խաղերի օրերը, ժամերը և մարզադաշտերը, այնուհետև՝ հաջորդող բոլոր մրցափուլերի մեկնարկից առնվազն 7 օր առաջ (բացառությամբ ֆորս-մաժորային իրավիճակների)՝ այդ մրցափուլերի խաղերի օրերը, ժամերը և մարզադաշտերը, ինչի վերաբերյալ ակումբները ծանուցվում են շրջաբերական նամակով և/կամ Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով:

14.03. Թիմերի մեկնարկային դիրքերը մրցաշարային աղյուսակներում որոշվում է վիճակահանությամբ: Վիճակահանությունը կազմակերպվում է ՀՖՖ Ֆուտզալի բաժնի կողմից և անցկացվում է խաղաշրջանը սկսելուց առնվազն 10 օր առաջ, բացառությամբ՝ ֆորս-մաժորային իրավիճակների: Վիճակահանության կազմակերպման վերաբերյալ մանրամասները սահմանվում են ՀՖՖ Ֆուտզալի բաժնի կողմից և վիճակահանությունից առնվազն երեք օր առաջ շրջաբերականով ուղարկվում են Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնության և Հայաստանի Գավաթի խաղարկության մասնակից ակումբներին: Վերջիններս իրավունք ունեն մասնակցելու վիճակահանությանը: Շրջաբերականում նշվում է նաև վիճակահանության անցկացման տեղը, օրը և ժամը:

14.04. Առաջնության հաստատված խաղացանկում փոփոխությունները կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքում ՀՖՖ Ֆուտզալի Բաժնի որոշմամբ՝ տվյալ խաղին մրցող ակումբների նվազագույնը 3 օր առաջ ներկայացրած գրությունների հիման վրա: Յուրաքանչյուր դեպքում վերջնական որոշումը կայացնում է ՀՖՖ Ֆուտզալի Բաժինը՝ ելնելով փոփոխության նպատակահարմարությունից: Սույն կետով սահմանված դեպքում խաղեր հետաձգելու կամ տեղափոխելու պարագայում ՀՖՖ Ֆուտզալի բաժինը կարող է տվյալ հետաձգված կամ տեղափոխված խաղը նշանակել տվյալ թիմ(եր)ի մասնակցությամբ մեկ այլ պաշտոնական խաղի մեկնարկից 24 ժամվա ընթացքում:

14.05. Առաջնությունների անցկացման ժամկետներն են՝

ա) Հայաստանի Բարձրագույն խումբ՝ 01.10.2025թ. - 30.05.2026թ.

բ) Հայաստանի Գավաթի խաղարկություն՝ 20.01.2026թ. - 30.05.2026թ

գ) Սուպերգավաթ՝ անցկացման ժամանակահատվածը հաստատվում է ՀՖՖ Ֆուտզալի բաժնի կողմից:

Առաջնությունների անցկացման ժամկետները կարող են փոփոխվել ՀՖՖ Ֆուտզալի բաժնի կողմից:

14.06. Մրցումների խաղացանկը ՀՖՖ սեփականությունն է: Ակումբները կարող են խաղացանկն օգտագործել գովազդային, կոմերցիոն և այլ նպատակներով՝ առանց երրորդ անձանց վերոնշյալ իրավասությունների փոխանցման:

14.07. Առաջնության խաղացանկի օգտագործումը երրորդ անձանց կողմից (բացառությամբ ակումբերի) հնարավոր է միայն ՀՖՖ Ֆուտզալի բաժնին գրավոր կերպով դիմելու և վերջինիս կողմից գրավոր կերպով համաձայնություն ստանալու դեպքում:

Հոդված 15. Վիճարկում

15.01. Ակումբները կարող են վիճարկել գործող ԻՖԱԲ «Ֆուտզալ խաղի» կանոնների կամ սույն կանոնակարգի դրույթների այնպիսի խախտումը, որն ազդել է խաղի ելքի վրա՝ համաձայն ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի:

ԳԼՈՒԽ 3: ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

Հոդված 16. Սպասարկող անձնակազմի նշանակումը

16.01. Խաղը սպասարկող մրցավարական անձնակազմը և տեսուչը նշանակվում են ՀՖՖ մրցավարական և տեսչական բաժնի կողմից:

16.02. Առանձին դեպքերում ՀՖՖ նախաձեռնությամբ խաղերը սպասարկող մրցավարական անձնակազմը կարող է հրավիրվել արտերկրից:

16.03. Ակումբների կամ այլ կազմակերպությունների պահանջով կամ խնդրանքով սպասարկող անձնակազմի կամ վերջինիս առանձին անդամների նշանակում կամ փոխարինում չի կատարվում:

16.04. Եթե խաղի ժամանակահատվածում մրցավարական անձնակազմի որևէ անդամ առողջական խնդիրների պատճառով չի կարողանում սպասարկել խաղը, ապա մրցավարական անձնակազմի տվյալ անդամին փոխարինում է 3-րդ մրցավարը :

Հոդված 17. Սպասարկման իրականացումը

17.01. Բարձրագույն խմբի առաջնության, Հայաստանի Գավաթի խաղարկության և Սուպերգավաթի խաղարկության խաղերը կազմակերպելու և սպասարկելու համար ՀՖՖ-ն յուրաքանչյուր խաղից առաջ նշանակում է սպասարկող անձնակազմ հետևյալ կազմով՝ տեսուչ, մրցավար, 2-րդ մրցավար, 3-րդ մրցավար և ժամանակաչափորդ :

17.02. Խաղերի սպասարկումն իրականացվում է համաձայն ԻՖԱԲ-ի կողմից ընդունված «Ֆուտզալ խաղի» կանոնների, ինչպես նաև ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի՝ պաշտոնական խաղերի անցկացումը կարգավորող այլ փաստաթղթերի:

17.03. Մրցավարների և տեսուչների իրավունքները և պարտականությունները սահմանվում են գործող ԻՖԱԲ «Ֆուտզալ խաղի» կանոնների, սույն Կանոնակարգի դրույթների և մրցավարությունն ու տեսչությունը կանոնակարգող՝ ՀՖՖ-ի այլ փաստաթղթերի համաձայն:

Հոդված 18. Սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները

18.01. Մրցավարական անձնակազմի ներկայացուցիչները, տեսուչի հետ միասին, պետք է ժամանեն հանդիպման վայր (մարզադահլիճ) խաղասկզբից առնվազն 90 րոպե առաջ ու անցկացնեն մարզադահլիճի պատրաստության ստուգում: Դաշտի որակի հետ կապված՝ խաղի անցկացման վերջնական որոշումը կայացնում է տվյալ խաղի գլխավոր մրցավարը:

18.02. Նախախային խորհրդակցությունից առաջ մրցավարը և տեսուչը ստուգում են խաղադաշտի որակը և մարզադահլիճի համապատասխանելիությունը սահմանված չափանիշներին:

18.03. Սպասարկող անձնակազմի բոլոր անդամներին արգելվում է խաղին մեկնել (վերադառնալ) տվյալ խաղի մասնակից ակումբներից որևէ մեկի հետ, և/կամ իջևանել միասին՝ բացառությամբ ֆորս-մաժորային իրավիճակների՝ նախապես տեղեկացնելով ՀՖՖ Ֆուտզալի բաժնին:

18.04. Խաղասկզբից ոչ ուշ, քան 60 րոպե առաջ, մրցավարական անձնակազմը ստուգում է մասնակից թիմերի կողմից Ֆուտբոլի կառավարման համակարգում և թղթային արձանագրությունում, եթե այդպիսին օգտագործվում է, տրամադրված խաղացողների ցուցակները, որոնց համապատասխանելիության համար պատասխանատու են դրանք ներկայացնող ակումբները:

18.05. Մրցավարը պետք է անմիջապես տեղեկացնի հանդիպման տեսուչին խաղից առաջ, ընթացքում և/կամ ավարտից հետո իր, իր օգնականների վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցության դեպքերի մասին:

18.06. Խաղի կազմակերպամ և անցկացման ընդհանուր վերահսկողությունը իրականացնում է խաղի տեսուչը:

18.07. Խաղի տեսուչի բացակայության դեպքում մրցավարը պարտավոր է փոխարինել նրան՝ կատարելով խաղի կազմակերպման, անցկացման և ավարտի հետ կապված տեսուչին վերապահված բոլոր գործառույթները:

18.08. Սպասարկող անձնակազմը պարտավոր է ձեռնարկել՝ խաղն անցկացնելուն ուղղված բոլոր հնարավոր և ողջամիտ քայլերը:

18.09. Տեսուչն իր զեկույցը մուտքագրում է Ֆուտբոլի կառավարման համակարգ մինչև խաղի հաջորդ օրը՝ ժամը 15:00-ն:

ԳԼՈՒԽ 4: ՖՈՒՏԶԱԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԹԻՄԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐԻ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 19. Ֆուտզալիստների և թիմերի անձնակազմերի հայտավորումը և վերահայտավորումը

19.01. ՖԶԲԽ մասնակից թիմերի կազմում թույլատրվում է առավելագույնը հայտավորել թիմի անձնակազմի 6 անդամի և 20 ֆուզալիստի: Թիմերը կարող են հայտավորել առավելագույնը 2 օտարերկրացի ֆուտզալիստի: Ակումբները պետք է ֆուտզալիստներին և անձնակազմի անդամներին հայտավորեն Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով:

19.02. ՖԶԳԽ մասնակից յուրաքանչյու թիմում պետք է հայտավորված լինեն նվազագույնը 2 անձնակազմի անդամ և 8 ֆուտզալիստ:

19.03. ՖԶԲԽ մասնակից թիմի հայտացուցակում միաժամանակ կարող են ընդգրկվել ոչ ավել, քան 2 լեգեոներներ: Յուրաքանչյուր խաղի արձանագրությունում յուրաքանչյուր թիմ կարող է ընդգրկել ոչ ավել, քան 2 լեգեոներներ :

19.04. Սույն կանոնակարգի շրջանակներում Եվրասիական Տնտեսական Միության անդամ՝ Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ղրղզստանի Հանրապետության ազգային հավաքականների վերջին 6 ամսվա ընթացքում պաշտոնական խաղերին մասնակցած ֆուտզալիստները, ինչպես նաև խաղերի չլինելու դեպքում տվյալ ազգային հավաքականի վերջին պաշտոնական հանդիպմանը մասնակցած ֆուտզալիստները չեն համարվում օտարերկրյա ֆուտզալիստներ (լեգեոներներ):

19.05. Թիմի անձնակազմի անդամներ են համարվում հետևյալ անձինք՝
ա) գլխավոր մարզիչ,

բ) գլխավոր մարզչի օգնական,

դ) բժիշկ,

ե) ֆիզիթերապևտ

զ) ադմինիտրատոր

է) թարգմանիչ

19.06. ՖԶԲԽ-ում հայտավորված թիմի անձնակազմը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

ա) թիմի գլխավոր մարզիչ, ով պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի Ֆուտզալի առնվազն «Բ» կարգի գործող մարզչական արտոնագիր կամ գործող՝ իրավասության ճանաչում ՈՒԵՖԱ-ի կողմից (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք կլինի ՈՒԵՖԱ-ի ֆուտզալի առնվազն «Բ» կարգի մարզչական արտոնագրին:

բ) գլխավոր մարզչի օգնական, ով պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի առնվազն «Ա» կարգի գործող մարզչական արտոնագիր կամ գործող իրավասության ճանաչում ՈՒԵՖԱ-ի կողմից (UEFA Recognition of Competence), ինչը համարժեք է ՈՒԵՖԱ-ի առնվազն «Ա» կարգի մարզչական արտոնագրին: Տվյալ կետը պարտադիր կերպով չի կիրառվի 2025/26 մրցաշրջանում և կգործի 2026/27 մրցաշրջանից:

19.07. Բարձրագույն խմբի մասնակից թիմերի ֆուտզալիստների հայտավորման ժամկետը սահմանվում է պաշտոնական առաջին խաղից 15 օր առաջ և ավարտվում է պաշտոնական առաջին խաղից 1 օր առաջ:

19.08. Հայտավորման պատուհանի բացման առաջին օրվանից սկսած մինչ տվյալ խաղաշրջանի ավարտը՝ Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակից թիմի կազմում պետք է հայտավորված լինի առնվազն 12 ֆուտզալիստ: Հայտավորման ենթակա ֆուտզալիստների նվազագույն քանակը չապահովելու դեպքում ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն կայացնում է որոշում՝ սույն հոդվածի խախտման վերաբերյալ:

19.09. Թիմը կարող է հայտավորել կամ վերահայտավորել այն ֆուտզալիստներին, որոնք գրանցված են տվյալ ակումբում: Ֆուտզալիստների գրանցումը կատարվում է ՀՖՖ

Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի համաձայն Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով:

19.10. Հայտավորման և վերահայտավորման համար ակումբները ՀՖՖ Ֆուտզալի բաժնի կողմից նախապես հաստատված գրաֆիկով սահմանված ժամկետներում ֆուտբոլի կառավարման համակարգում վերբեռնում են հայտավորվող/վերահայտավորվող յուրաքանչյուր ֆուտզալիստի համար բուժհաստատության կողմից հաստատված տեղեկանք՝ ֆուտզալիստի առողջական վիճակի մասին:

19.11. Հայտավորման ժամկետի լրանալուց հետո թիմերում վերահայտավորումը կատարվում է սահմանված ժամկետներում՝ առաջնության առաջին խաղի օրվանից սկսած - 07.11.2025 (Երևանի ժամանակով՝ 24:00) և 20.01.2026-17.02.2026 (Երևանի ժամանակով՝ 24:00):

19.12. Առաջնության ընթացքում ֆուտզալիստի կամ թիմի անձնակազմի անդամի հայտից հանելու գործընթացը կատարվում է ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով:

19.13. Վերահայտավորումը Բարձրագույն խմբի առաջնության վերահայտավորվող ֆուտզալիստիների համար անվճար է:

Սահմանված ժամկետներից դուրս վերահայտավորվել կարող են միայն հետևյալ ֆուտբոլիստները՝

ա) արտասահմանից ժամանած այն ֆուտբոլիստները, որոնց միջազգային տրանսֆերային սերտիֆիկատի հարցման պատասխանը ՖԻՖԱ-ի և ՀՖՖ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգով սահմանված կարգով ՀՖՖ-ն ստացել է պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների գրանցման համար սահմանված ժամանակահատվածից (տրանսֆերային պատուհանից) դուրս: Սույն դեպքում ակումբը պարտավոր է իրականացնել ֆուտբոլիստի վերահայտավորումը գրանցման օրվանից հետո 20 օրվա ընթացքում, եթե այլ բան չի բխում սույն կանոնակարգի և ֆուտզալ մարզաձևը կարգավորող այլ իրավական ակտերի էությունից: Սույն մասով սահմանված ժամկետի պահանջը չպահպանելը զրկում է ակումբին տվյալ ֆուտբոլիստին վերահայտավորելու իրավունքից մինչև հաջորդ հայտավորման/ վերահայտավորման համար սահմանված ժամկետը,

բ) զորացրված ֆուտբոլիստները, ում վերահայտավորումը կատարվել է ոչ ուշ, քան նրանց զորացրվելուց 40 օրվա ընթացքում,

գ) Մ16, Մ17 և Մ18 տարիքային խմբերի առաջնություններում հանդես եկող ֆուտբոլիստները,

դ) ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգով սահմանված բացառությունների կիրառման այլ դեպքերում:

19.14. Ֆուտզալիստները մեկ ակումբից մյուսը կարող են տեղափոխվել՝ համաձայն ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի դրույթների:

19.15. Թիմի անձնակազմի անդամները վերահայտավորվում են առանց ժամկետային և քանակական սահմանափակումների:

19.16. Վարձակալության ժամկետը լրանալուց հետո ֆուտզալիստի վերադարձը մայր ակումբ տեղափոխություն չի համարվում: Վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալուց հետո ֆուտզալիստի վերադարձը մայր ակումբ հիմք չի հանդիսանում վերահայտավորման ժամկետները խախտելու համար:

19.17. Ֆուտզալիստի կամ թիմի անձնակազմի անդամի հայտից հանելը կատարվում է առաջնության ընթացքում Ֆուտբոլի կառավարման համակարգի միջոցով:

19.18. Ակումբները հայտավորման փաստաթղթերը համակարգ են ներբեռնում ՀՖՖ Ֆուտզալի բաժնի կողմից հաստատված գրաֆիկով սահմանված օրերին:

ԳԼՈՒԽ 5: ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հոդված 20. Խաղի անցկացման կարգը

20.01. Սույն կանոնակարգով սահմանված պրոֆեսիոնալ մրցումների շրջանակներում խաղերը կազմակերպվում և անցկացվում են՝ համաձայն գործող ԻՖԱԲ

գործող «Ֆուտզալ խաղի» կանոնների, սույն կանոնակարգի, ինչպես նաև ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի՝ պաշտոնական խաղերի անցկացումը կարգավորող այլ փաստաթղթերի:

20.02. Խաղը բաղկացած է 20 րոպե մաքուր խաղաժամանկով 2 խաղակեսից և խաղակեսերի միջև ընկած մինչև 15 րոպե ընդմիջումից՝ ըստ գործող ԻՖԱԲ «Ֆուտզալ խաղի» կանոնների:

Հոդված 21. Լռության րոպե, սոցիալական և հասարակական նշանակության, ռասիզմի դեմ պայքարի և արդար խաղի միջոցառումները

21.01. ՀՖՖ-ի կողմից Բարձրագույն խմբի շրջանակներում խաղերի ժամանակ առաջարկվող կամ կազմակերպվող մեկ րոպե լռության արարողության, ինչպես նաև բոլոր սոցիալական և հասարակական նշանակության, ռասիզմի դեմ պայքարի և արդար խաղի միջոցառումները ենթակա են պարտադիր կատարման Ակումբների կողմից:

21.02. Մասնակից ակումբների կողմից խաղերի ժամանակ որևէ միջոցառման, այդ թվում՝ մեկ րոպե լռության արարողության կազմակերպման դեպքում, նախաձեռնող ակումբը խաղից նվազագույնը 2 օր առաջ պետք է գրավոր կերպով դիմի ՀՖՖ ֆուտզալի բաժնին՝ անհրաժեշտ գրավոր համաձայնություն ստանալու նպատակով: Համապատասխան միջոցառումն անցկացնելու համար գրավոր կերպով չդիմելու և գրավոր կերպով համաձայնություն չստանալու դեպքում՝ տվյալ միջոցառման անցկացումը կարող է արգելվել ՀՖՖ ֆուտզալի բաժնի կողմից: Նախապես չնախատեսված առաջարկությունների դեպքում նախաձեռնող ակումբը խաղից նվազագույնը 1 ժամ առաջ պետք է դիմի տվյալ խաղի տեսուչին՝ բանավոր համաձայնություն ստանալու նպատակով: Այդ դեպքում տեսուչը պարտավոր է նախապես քննարկել ՀՖՖ ֆուտզալի բաժնի հետ և համաձայնության առկայության դեպքում միջոցառման անցկացման վերաբերյալ տալ բանավոր թույլտվություն: Եթե նախաձեռնող ակումբը խաղից նվազագույնը 1 ժամ առաջ չի դիմել խաղի տեսուչին, ապա դրանից հետո դիմելու դեպքում նախաձեռնող ակումբը չի կարող ստանալ միջոցառման անցկացման համաձայնություն:

21.03. Ցանկացած պարագայում միջոցառումների թույլտվության և դրա անցկացման իրավունքը պատկանում է ՀՖՖ Ֆուտզալի բաժնին:

21.04. Բոլոր դեպքերում կազմակերպվող միջացառումները և արարողությունները չպետք է ազդեն խաղի մեկնարկային ժամի և հետհաշվարկի վրա:

Հոդված 22. Չկայացած և անավարտ խաղերը

22.01. Չկայացած կամ անավարտ են համարվում այն խաղերը, որոնք համապատասխանաբար, չեն կայացել կամ ընդհատվել են և չեն շարունակվել հետևյալ պատճառներից որևէ մեկի հիմքով՝

ա) եղանակային անբարենպաստ պայմաններ,

բ) ֆորս-մաժորային իրավիճակ,

գ) լուսավորման համակարգի խափանում, որը տեղի է ունեցել անկախ դաշտի տեր ակումբի կամքից, և որը հնարավոր չի եղել վերականգնել 60 րոպեի ընթացքում,

դ) թիմի կողմից խաղադաշտի լքում,

ե) երրորդ անձանց միջամտություն, որն էականորեն խոչընդոտում կամ անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,

զ) թիմի ֆուտզալիստի, անձնակազմի և/կամ երկրպագուի անկարգապահ վարքագիծ, որն անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,

է) հասարակական կարգի այնպիսի խախտում, որն անհնար է դարձնում խաղի հետագա բնականոն ընթացքը և/կամ ազդում է խաղի արդյունքի վրա,

ը) թիմի կազմում 3-ից պակաս ֆուտզալիստների առկայություն,

թ) անկանխատեսելի հանգամանք, որն անհնար է դարձնում խաղի մեկնարկը, ընթացքը և/կամ շարունակությունը կամ ազդում է խաղի արդյունքի վրա։

22.02. Խաղը չկայացած կամ անավարտ համարելու մասին որոշումը կայացնում է խաղի մրցավարը՝ ՀՖՖ Ֆուտզալի բաժնի հետ խորհրդակցության արդյունքում՝ հիմնվելով գործող ԻՖԱԲ «Ֆուտզալ խաղի» կանոնների վրա։

22.03. Եթե խաղը չի կայացել կամ ընդհատվել ու չի շարունակվել սույն հոդվածի 22.01. մասի «ա», «բ» կամ «գ» կետերի հիմքով՝ անկախ ակումբների կամքից, ապա այն տեղի է ունենում կամ շարունակվում է հաջորդ օրը՝ խաղի ընդհատման րոպեին հաջորդող րոպեից։ Եթե հանդիպումը չի կարող նշանակվել հաջորդ օրը, ապա ՀՖՖ Ֆուտզալի Բաժինը նշանակում է հանդիպումը մեկ այլ օր կամ օրացուցային պահեստային օր։

22.04. Տեղափոխված հանդիպման անցկացման վայրը մնում է անփոփոխ: Եթե որոշակի հանգամանքներով պայմանավորված հնարավոր չէ խաղն անցկացնել նախանշված վայրում, ապա ՀՖՖ Ֆուտզալի Բաժինը պետք է հանդիպումը վերանշանակի մեկ այլ մարզադահլիճում:

22.05. Եթե մրցավարը որոշել է կանգնեցնել խաղը, ապա մնացած խաղաժամանակը պետք է անցկացվի հետևյալ պայմաններում.

22.05.1. Խաղի արձանագրությունում պետք է լինեն միայն խաղացողները և թիմերի անձնակազմերը, որոնք հանդիպման դադարեցման պահին գտնվել են խաղադաշտում և/կամ պահեստայինների նստարանին: Բացառություն են կազմում այն խաղացողները և անձնակազմի անդամները, որոնք հանդիպման դադարեցման պահին փոխարինվել են կամ հեռացվել: Հանդիպման դադարեցման պահին խաղադաշտում գտնված խաղացողները չպետք է նշվեն արձանագրության մեջ որպես պահեստային խաղացող, երբ հանդիպումը վերսկսվի:

22.05.2. Բոլոր կարգապական տույժերն ու պատժամիջոցները, որոնք եղել են մինչ հանդիպման դադարեցումը, մնում են անփոփոխ:

22.05.3. Բոլոր զգուշացումները, որոնք տրվել են մինչ հանդիպման դադարեցումը, չեն հաշվարկվում դեղին քարտերի հաշվարկում, քանի դեռ հանդիպումն ամբողջությամբ չի ավարտվել:

22.06. Սույն հոդվածի 22.01. մասի «դ»-ից «թ» կետերով ամրագրված հիմքերով խաղն ընդհատվելու պարագայում այն չի շարունակվում, և չկայանալու պարագայում՝ չի վերախաղարկվում:

22.07. Եթե մրցավարը որոշել է դադարեցնել խաղը, ապա մնացած խաղաժամանակը պետք է անցկացվի հետևյալ պայմաններում՝

22.07.1. մինչև խաղի դադարեցումը հեռացված ֆուտզալիստ(ներ)ը չեն կարող փոխարինվել մնացած խաղաժամանակում, և թիմի խաղացողների քանակը մնում է նույնը, ինչ մինչև խաղի դադարեցվելը,

22.07.2. հանդիպումը պետք է վերսկսվի նույն տեղում, որտեղ հանդիպումը դադարեցվել է (այսինքն՝ տուգանային հարված, եզրային նետում, դարպասից հարված, անկյունային հարված, 6-մետրանոց հարված և այլն): Եթե խաղն ընդհատվում է իր բնականոն ընթացքի պահին, ապա պետք է վերսկսվի վիճաբանական գնդակի նետումով,

22.07.3. անավարտ հանդիպման դադարի ժամը, դադարեցնելու պատճառը, կայացրած կարգապահական տույժերը և հանդիպման խաղացված հատվածի հաշիվը պետք է արտացոլվեն Ֆուտբոլի կառավարման համակարգում և արձանագրության թղթային տարբերակում, եթե այդպիսին օգտագործվում է, ինչպես նաև՝ Տեսուչի հաշվետվության մեջ: Հանդիպման խաղացված հատվածի հաշիվը և կարգապահական տույժերը հանդիպման վերսկսումից հետո պահպանվում են:

Հանդիպումն ավարտին հասցնելու համար կազմվում են առանձին արձանագրություն և տեսուչի առանձին հաշվետվություն:

22.08. Եթե անավարտ խաղին մասնակցած ֆուտզալիստ(ներ)ն առողջական խնդիրների պատճառով չի/չեն կարող մասնակցել խաղի շարունակությանը, ապա ֆուտզալիստ(ներ)ը կարող է/են փոխարինվել տվյալ խաղի արձանագրությունում նշված այլ ֆուտզալիստ(ներ)ով: Եթե տվյալ խաղի արձանագրությունում պահեստային ֆուտզալիստներ չկան, ապա տվյալ թիմը խաղին մասնակցում է պակաս թվով ֆուտզալիստներով:

22.09. Սույն հոդվածի 22.01. մասի «դ»-ից «թ» կետերով ամրագրված հիմքերով խաղն ընդհատվելու կամ չկայանալու դեպքում մեղավոր թիմի հաշվին գրանցվում է տեխնիկական պարտություն՝ 0:5 հաշվով, իսկ մրցակցի հաշվին՝ տեխնիկական հաղթանակ 5:0 հաշվով: Եթե խաղն ընդհատվել կամ չի կայացել երկու թիմերի մեղավորության կամ դիտավորության պատճառով, ապա երկու թիմերին գրանցվում է տեխնիկական պարտություն՝ 0:5 հաշվով: ՀՖՖ-ի Կարգապահական և Էթիկայի կոմիտեն իրավասու է սահմանել նաև այլ պատժամիջոցներ ՀՖՖ-ի Կարգապահական և Էթիկային կանոնակարգի շրջանակներում:

22.10. Եթե թիմերի ֆուտզալիստների, ակումբի պաշտոնյաների, թիմի անձնակազմի անդամների կամ երկրպագուների կողմից դրսևորվել է ոչ սպորտային վարքագիծ, որն անհնար է դարձրել խաղի մեկնարկը կամ շարունակությունը, ապա խաղը համարվում է կայացած, բայց թիմերի հաշվին միավոր չի գրանցվում:

22.11. Եթե խաղի արդյունքը չեղյալ է համարվել, ապա խաղի ընթացքում գրանցված գոլերը ռմբարկուների հաշվարկում չեն ներառվում, իսկ կարգապահական բոլոր տույժերը, ինչպես նաև դեղին և կարմիր քարտերը մնում են ուժի մեջ:

22.12. Չկայացած կամ անավարտ խաղերը, որտեղ որևէ թիմի հաշվին գրանցվել է տեխնիկական պարտություն, չեն կարող հաշվարկվել որպես որակազրկումը մարելու միջոց:

22.13. Ֆուտզալիստների և թիմի անձնակազմի որակազրկումները գործում են մինչև վերջիններիս կողմից բաց թողնվելիք խաղի, իսկ մեկից ավել խաղերի պարագայում՝ մինչև վերջին խաղի ավարտը ներառյալ: Որակազրկված ֆուտզալիստը կամ անձնակազմի անդամն իրավունք ունի մասնակցելու տվյալ խաղին, եթե բաց թողնվելիք վերջին խաղը տվյալ խաղի մեկնարկից առնվազն 60 րոպե առաջ ամբողջությամբ ավարտվել է:

22.14. Անավարտ կամ չկայացած խաղի ընդհատվելու կամ չկայանալու պատճառը, ժամանակը և հաշիվը գրանցվում են տվյալ խաղի արձանագրության մեջ և տեսուչի զեկույցում:

22.15. Սույն հոդվածի 22.01. մասում նշված որևէ հիմքով ընդհատված, սակայն 15 րոպեի ընթացքում վերսկսած և բնականոն ընթացքով շարունակված խաղը անավարտ խաղ չի համարվում: Այդ խաղը վերսկսվում է ընդհատման րոպեին հաջորդող րոպեից, և խաղի շարունակության ժամանակ գործում են այն բոլոր կարգավորումները և կանոնները, որոնք կգործեին չընդհատված խաղի դեպքում: Այդ խաղի արձանագրությունում նշում է կատարվում խաղի ընդհատման պատճառի, ընդհատման և վերսկսման ժամերի, ինչպես նաև մրցավարի կողմից կարևոր համարվող այլ հանգամանքների մասին:

Հոդված 23. Թիմերի չներկայանալը խաղին, առաջնություններին մասնակցությունից հրաժարվելը կամ առաջնություններից հեռացվելը

23.01. Մասնակից թիմերը պարտավոր են ժամանել մարզադահլիճ խաղի նշանակված ժամից նվազագույնը 60 րոպե առաջ, իսկ թիմի անձնակազմի անդամները, որոնք պետք է մասնակցեն նախախաղային խորհրդակցությանը, պետք է մարզադահլիճ ժամանեն տվյալ խաղից նվազագույնը 75 րոպե առաջ:

23.02. Եթե թիմն ուշանում է մարզադահլիճ ժամանելու համար սահմանված ժամանակից, ապա պարտավոր է այդ մասին նախապես հայտնել ՀՖՖ Ֆուտզալի բաժնին:

23.03. Եթե թիմը խաղասկզբից 60 րոպե առաջ մարզադահլիճ չի ժամանել և ուշացման պատճառների մասին ՀՖՖ Ֆուտզալի բաժնին չի տեղեկացրել, ապա համարվում է խաղին չներկայացած: Խաղի մրցավարը և տեսուչը պարտավոր են արձանագրել տվյալ փաստը այդ խաղի արձանագրությունում ու տեսուչի զեկույցում և ներկայացնել ՀՖՖ:

23.04. Եթե թիմը սահմանված ժամկետում տեղեկացնում է խաղից ուշանալու մասին, ապա տեսուչը, խորհրդակցելով ՀՖՖ Ֆուտզալի բաժնի հետ, կարող է որոշում կայացնել խաղասկիզբը առավելագույնը 60 րոպեով հետաձգելու մասին:

23.05. Սույն կանոնակարգի դրույթները պարբերաբար խախտելու, ՀՖՖ-ի որոշումները չկատարելու և իր գործողություններով կամ անգործությամբ ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի հիմնարար սկզբունքները ոտնահարելու դեպքում թիմը ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված կարգով կարող է հեռացվել տվյալ առաջնությունից:

23.06. Եթե ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից Բարձրագույն խմբի առաջնությունից հեռացված թիմը մասնակցել է 50% կամ պակաս խաղերի, ապա այդ խաղերի արդյունքները չեղյալ են համարվում, և տվյալ թիմի ու մրցակից թիմերի կողմից այդ խաղերում վաստակած միավորները, խփած և բաց թողած գնդակները, ինչպես նաև դեղին և կարմիր քարտերը զրոյացվում են՝ բացառությամբ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված որակազրկումների: Եթե թիմը մասնակցել է տվյալ առաջնության 50%-ից ավել խաղերի, ապա այդ խաղերում վաստակած միավորները, խփած և բաց թողած գնդակները, ինչպես նաև դեղին և կարմիր քարտերը մնում են ուժի մեջ: Սակայն տվյալ թիմը զրկվում է չեմպիոն դառնալու հնարավորությունից, ՈՒԵՖԱ-ի կողմից կազմակերպվող մրցաշարին մասնակցելու իրավունքից: Այն թիմերի օգտին, որոնք տվյալ առաջնության մնացած հատվածում հանդիպելու էին հեռացված թիմի հետ, մնացած բոլոր խաղերում գրանցվում է տեխնիկական հաղթանակ 5:0 հաշվով:

23.07. Այն դեպքում, երբ առաջնությունից հեռացված թիմի դեմ խաղերում ստացած դեղին քարտ(եր)ը զրոյացվել են, սակայն այդ խաղերում ստացած դեղին քարտ(եր)ի պատճառով մինչև թիմի առաջնությունից հեռացումը ֆուտզալիստն արդեն բաց էր թողել սահմանված քանակի խաղ, ապա այդ ֆուտզալիստը չպետք է բաց թողնի խաղ հեռացված

թիմի քարտերը զրոյացնելուց հետո կրկին անգամ որակազրկման նույն քանակի դեղին քարտեր կուտակելուց հետո:

23.08. Եթե Կարգապահական և Էթիկայի կոմիտեի կողմից ընդունված որոշմամբ թիմը հեռացվել է Գավաթի խաղարկությունից կամ զրկվել է տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցումների խաղերին մասնակցելու իրավունքից, ապա Գավաթի խաղարկությունում տվյալ թիմի արդեն անցկացրած բոլոր խաղերի արդյունքները չեղյալ են համարվում, և այդ խաղերի ընթացքում ֆուտզալիստների ստացած դեղին և կարմիր քարտերը զրոյացվում են բացառությամբ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված որակազրկումների: Սույն կետի դրույթները կիրառվում են նույնիսկ այն դեպքերում, եթե մինչև հեռացումը տվյալ թիմն արդեն դուրս էր մնացել Գավաթի խաղարկությունից:

23.09. Այն թիմերը, որոնք հեռացվել են Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնությունից ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ կամ սեփական նախաձեռնությամբ հրաժարվել են Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնությանն մասնակցությունից կամ հաջորդ մրցաշրջանում չեն մասնակցել ՀՖՖ հովանու ներքո անցկացվող ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնությանը, ապա հաջորդ մրցաշրջանում կարող են մասնակցել միայն Առաջին խմբի առաջնությանը:

23.10. Սուպերգավաթի խաղարկությունն անցկացվում է նախորդ մրցաշրջանի Բարձրագույն խմբի առաջնության և Հայաստանի Գավաթի խաղարկության հաղթող թիմերի միջև: Եթե Բարձրագույն խմբի առաջնության և Հայաստանի Գավաթի խաղարկության հաղթողը միևնույն թիմն է, ապա Սուպերգավաթի խաղարկությունն անցկացվում է Բարձրագույն խմբի առաջնության հաղթողի և Հայաստանի Գավաթի խաղարկության եզրափակչի մասնակցի միջև:

23.11. Եթե Սուպերգավաթի մասնակից որևէ թիմ հեռացվել է ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից (առաջնությունից կամ գավաթի խաղարկությունից) կամ երկու թիմն էլ հրաժարվում է/են մասնակցությունից, ապա ՀՖՖ-ն իրավունք ունի Սուպերգավաթի անցկացման վերաբերյալ հատուկ որոշում կայացնել: Իսկ եթե թիմերից միայն մեկն է հրաժարվում և/կամ հեռացվել է ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից (առաջնությունից կամ գավաթի խաղարկությունից), ապա Սուպերգավաթը ՀՖՖ-ի կողմից հանձնվում է մրցակից թիմին:

23.12. Բարձրագույն խմբի առաջնությունից ՀՖՖ-ի Կարգապահական և Էթիկայի կոմիտեի կողմից հեռացված կամ սեփական նախաձեռնությամբ մասնակցությունից հրաժարված թիմի մուտքավճարը չի վերադարձվում:

Հոդված 24. Նախախաղային խորհրդակցությունը

24.01. Յուրաքանչյուր հանդիպումից 1 ժամ առաջ խաղի տեսուչի ղեկավարությամբ անցկացվում է նախախաղային խորհրդակցություն, որին մասնակցում են՝

ա) տեսուչը

բ) մրցավարը կամ խաղը սպասարկող անձնակազմի ներկայացուցիչը,

գ) մրցող ակումբների ներկայացուցիչները,

դ) մարզադաշտի տնօրինության ներկայացուցիչը,

ե) ոստիկանության և/կամ անվտանգության ծառայության ներկայացուցիչը,

զ) ՀՖՖ ներկայացուցիչ (որոշ դեպքերում)

24.02. Ակումբների կողմից նախախաղային խորհրդակցությանը մասնակցող անձինք մրցավարի ստուգմանն են ներկայացնում ֆուտզալիստների և դարպասապահի խաղային մարզահագուստն ամբողջությամբ՝ մարզաշապիկ, կիսավարտիք (կամ սպորտային տաբատ դարպասապահի դեպքում), կիսագուլպա, մարզումային ժիլետներ: Հիմնական հանդերձանքից բացի պետք է ներկայացվեն նաև պաշտպանիչ դիմակներ, պաշտպանիչ գլխարկներ, գունավոր էլաստիկ ժապավեններ, եթե դրանք օգտագործվելու են:

Հոդված 25. Մարզադահլիճի հաշվի լուսատախտակը

25.01. Մարզադահլիճի հաշվի լուսատախտակների վրա կարող են ցուցադրվել տվյալ հանդիպման կրկնապատկերները: Այնուամենայնիվ, դաշտի տեր ակումբը պետք է իրականացնի կրկնապատկերների ցուցադրումը միայն այն դեպքում, երբ գնդակը խաղի մեջ չէ և/կամ խաղակեսերի ընդմիջման ժամանակ: Այս պայմանը վերաբերում է նաև խաղի լրացուցիչ ժամանակին: Արգելվում է այնպիսի կադրերի ցուցադրումը, որոնք

ա) կարող են ազդեցություն ունենալ խաղի ընթացքի վրա,

բ) կարող են պարունակել հանդիսատեսին ցանկացած ձևի անկարգությունների դրդող, խրախուսող կամ հրահրող երևույթ/տարր,

գ) կարող են պարունակել ցանկացած հասարակական անկարգություն, քաղաքացիական անհնազանդություն կամ որևէ առևտրային և/կամ վիրավորական նյութ,

դ) պարունակում են արդար խաղի սկզբունքներին հակասող ցանկացած գործողություն կամ վարք (ներառյալ ցանկացած պատկեր, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն միտված է ընդգծելու մրցավարի կողմից ընդունված փաստացի որոշումները),

ե) ուղեկցվում են ձայնով:

Հոդված 26. Անվտանգության ապահովումը

26.01. Մարզադահլիճում գտնվող հանդիսատեսին դաշտի տեր Ակումբը պետք է արգելի՝

ա) մարզադահլիճում տեղի ունեցող մարզական միջոցառման կազմակերպիչների, մարզադահլիճում սեփականատիրոջ և/կամ վարձակալողի կողմից արգելված վայրերում ծխելը,

բ) իրերի, այդ թվում՝ բանջարեղենի, մրգերի կամ ցանկացած տեսակի տարայով կամ առանց տարայի հեղուկի նետումը հանդիպման մասնակիցների, հանդիսատեսի, այլ անձանց, ինչպես նաև մարզադահլիճի ուղղությամբ կամ հենց խաղահրապարակի վրա,

գ) բղավոցները, վանկարկումները, երգերի կատարումը, նշանների և/կամ այլ խորհրդանիշների հասարակական ցուցադրումը, տպագիր նյութերի տարածումը, ինչպես նաև այլ գործողություններ, որոնք վիրավորում են միջոցառման մասնակիցների և հանդիսատեսի արժանապատվությունը, վարկաբեկում են նրանց, կրում են ծայրահեղական բնույթ կամ ուղղված են ռասսայական, սոցիալական, ազգային խտրականություն առաջացնելուն,

դ) խաղին ներկայանալ կենդանիների հետ,

ե) ցանկացած տեսակի, այդ թվում՝ նաև ինքնապաշտպանության համար նախատեսված զենք, զինամթերք, կտրող և ծակող առարկաներ, արցունքաբեր և նյարդային ազդեցության գազային բալոններ, որպես զենք օգտագործվելու ենթակա կամ հանդիսատեսի առողջությանը հավանական վնաս պատճառող այլ առարկաներ, այդ թվում՝ հովանոցներ, ծանր առարկաներ և այլն, բացառությամբ թմբուկների,

զ) դյուրավառ նյութեր՝ անկախ դրանց տեսակից և նշանակետից, ներառյալ այն նյութերը, որոնք կարող են օգտագործվել դյուրավառ նյութերի կամ ծխի պատրաստման

համար (բացառությամբ ծխախոտի, գրպանի պլաստմասե կրակայրիչի), այդ թվում՝ ծխարձակիչներ, ճայտրուկներ, ազդանշանային հրթիռներ, պայթուցիկ, թունավոր և հոտավետ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, գազի բալոններ:

26.02. Դաշտի տեր Ակումբը ոստիկանության աշխատակցի հետ միասին պետք է կանխի մարզադահլիճի ներսում/մերձակայքում հանդիսատեսի (երկրպագուների) կողմից իրականացվող ցանկացած սադրիչ գործողություն (ֆուտզալիստների, մրցավարների, հակառակորդ թիմի երկրպագուների հանդեպ սադրիչ խոսքեր, ռասիստական վարքագիծ կամ այն քարոզող պաստառներ, դրոշներ և այլն):

ԳԼՈՒԽ 6: ՖՈՒՏԶԱԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԹԻՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ

Հոդված 27. Ֆուտզալիստների և թիմի անձնակազմի մասնակցությունը

27.01. Ֆուտզալիստները մրցումներին մասնակցում են ֆուտբոլիստի ՀՖՖ նույնականացման քարտով, իսկ բացառիկ դեպքերում՝ քաղաքացիական անձնագրով: ՀՖՖ-ի կողմից սահմանված բացառիկ դեպքում ֆուտբոլիստները խաղին կարող են մասնակցել ՀՖՖ ֆուտզալի բաժնի կողմից տրամադրված հատուկ փաստաթղթով:

27.02. Թիմերի անձնակազմերը խաղին մասնակցում են ՀՖՖ նույնականացման քարտի առկայության դեպքում: ՀՖՖ-ի կողմից սահմանված բացառիկ դեպքերում անձնակազմի անդամները խաղին կարող են մասնակցել ՀՖՖ-ի Ֆուտզալի բաժնի կողմից տրամադրված հատուկ փաստաթղթերով:

27.03. Խաղին կարող են մասնակցել միայն խաղի արձանագրությունում նշված ֆուտզալիստները, պաշտոնյայի և թիմի բժշկի կողմից ստորագրված և ներկայացված խաղի արձանագրությունում:

27.04. Առանց թիմի անձնակազմի անդամի խաղը չի անցկացվում, ինչպես նաև խաղի ընթացքում թիմի անձնակազմի անդամի հեռացման դեպքում, եթե տվյալ թիմը հանդիպման ընթացքում չունի արձանագրությունում նշված մեկ այլ անձնակազմի անդամ, խաղը դադարեցվում է, և տվյալ թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն:

Յուրաքանչյուր թիմի կողմից խաղի արձանագրությունում կարող է ներկայացվել առավելագույնը 14 ֆուտզալիստ, որոնցից առավելագույնը 5-ը՝ հիմնական և 9-ը՝ փոխարինող (պահեստային), Թիմի կազմը պետք է վավերացված լինի ակումբի իրավասու պաշտոնյայի կողմից:

27.05. Հայաստանի Բարձրագույն խմբի խաղերին խաղադաշտում միաժամանակ կարող են լինեն առավելագույնը 2 օտարերկրյա ֆուտզալիստներ (լեգեոներներ): Այս դրույթները խախտելու դեպքում թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն 0:5 հաշվով՝

27.06. Թիմերի անձնակազմի անդամները որպես ֆուտզալիստ հանդես գալու իրավունք չունեն:

27.07. Խաղի ժամանակ ֆուտզալիստները պետք է կրեն գործող ԻՖԱԲ «Ֆուտզալ խաղի» կանոններով սահմանված մարզակոշիկներ, հակառակ դեպքում մրցավարների կողմից ստուգման արդյունքում տվյալ ֆուտզալիստին չի թույլատրվի մասնակցել տվյալ խաղին:

27.08. Յուրաքանչյուր թիմի կողմից խաղի արձանագրությունում կարող են ներկայացվել նվազագույնը 3 ֆուտզալիստ:

27.09. Խաղերին մասնակցելու իրավունք ունեն 16 տարին լրացած պրոֆեսիոնալ կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստները:

27.10. Խաղին կարող են մասնակցել սիրողական կարգավիճակ ունեցող 15-17 տարեկան ֆուտբոլիստներ՝ բուժհաստատության տեղեկանքով, որի բնօրինակը խաղից առաջ պետք է ներկայացվի մրցավարական անձնակազմին:

27.11. Խաղի ընթացքում տեխնիկական գոտում գտնվելու և պահեստայինների նստարանին նստելու իրավունք ունեն միայն խաղի արձանագրությունում նշված անձինք:

27.12. Արգելվում է ծխելը մարզադահլիճի տեխնիկական գոտում, ինչի նկատմամբ հսկողությունը պետք է իրականացվի դաշտի տեր ակումբի կողմից:

Հոդված 28. Խաղի արձանագրություն

28.01. Յուրաքանչյուր խաղ պետք է ունենա արձանագրություն:

28.02. Արձանագրության առաջին մասը կազմվում է խաղի մասնակից ակումբների կողմից: Ակումբների ներկայացուցիչները խաղասկզբից ոչ ուշ, քան 60 րոպե առաջ Ֆուտբոլի կառավարման համակարգում պետք է մուտքագրեն խաղի արձանագրության իրենց հատվածը: Յուրաքանչյուր ակումբ մուտքագրում է խաղին մասնակցող հիմնական և փոխարինող (պահեստային) ֆուտզալիստներին և նրանց մարզաշապիկի համարները, ինչպես նաև թիմի անձնակազմի անդամներին: Եթե տեխնիկական պատճառներով հնարավոր չէ լրացնել խաղի արձանագրությունը Ֆուտբոլի կառավարման համակարգում, ապա արձանագրության առձեռն տարբերակը (ՀՖՖ Մրցավարական և տեսչական բաժնի կողմից նախապես ակումբներին տրամադրված ձևաթղթի վրա) պետք է լրացվի ակումբի կողմից և տրամադրվի մրցավարական անձնակազմին:

28.03. Արձանագրության մեջ կարող են նշվել միայն այն ֆուտզալիստները և թիմերի անձնակազմի այն անդամները, ովքեր հայտավորված են և որակազրկված չեն տվյալ խաղին մասնակցելու համար: Չհայտավորված և որակազրկված ֆուտզալիստների խաղին մասնակցության պատասխանատվությունը կրում է տվյալ ակումբը:

28.04. Ակումբների և մրցավարի կողմից կազմված արձանագրությունները միացվում են և համարվում են խաղի մեկ միասնական արձանագրություն:

28.05. Մրցավարը խաղավարտից հետո առավելագույնը մեկ ժամվա ընթացքում կազմում է խաղի արձանագրությունը՝ մուտքագրելով այն Ֆուտբոլի կառավարման համակարգում:

28.06. Եթե տեխնիկական պատճառներով հնարավոր չէ լրացնել հաշվետվությունը Ֆուտբոլի կառավարման համակարգում, ապա մրցավարը պետք է արձանագրությունը լրացնի գրավոր, ներկայացնի այն ՀՖՖ մրցավարական և տեսչական բաժին, այնուհետև՝ 24 ժամվա ընթացքում, լրացնի իր հաշվետվությունն առցանց:

Հոդված 29. Ֆուտզալիստների փոխարինումները

29.01. Երկու թիմերի խաղի հաստատված արձանագրությունները մրցավարին հանձնելուց հետո՝ մինչև սկզբնահարվածը, չի թույլատրվում կատարել փոփոխություններ, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

ա) Եթե հիմնական կազմում արձանագրության մեջ նշված 5 ֆուտզալիստներից որևէ մեկն ի վիճակի չէ սկսել խաղը անսպասելի ֆիզիկական անկարողության պատճառով, ապա նա կարող է փոխարինվել միայն արձանագրությունում նշված 9 փոխարինողներից ցանկացած մեկով: Հիմնական կազմում արձանագրության մեջ նախապես նշված 5 ֆուտզալիստներից այն ֆուտզալիստը, ով անսպասելի ֆիզիկական անկարողության պատճառով փոխարինվել է մինչև խաղի սկզբնահարվածը, այլևս չի կարող նշված լինեն տվյալ խաղի արձանագրության մեջ, և, հետևաբար, խաղի ընթացքում չի կարող գտնվել տեխնիկական գոտում:

բ) Եթե խաղի արձանագրությունում նշված 9 փոխարինողներից որևէ մեկն անսպասելի ֆիզիկական անկարողության/վնասվածքի պատճառով ի վիճակի չէ մասնակցել խաղին, ապա նա/նրանք կարող է/են փոխարինվել միայն հայտավորված ֆուտզալիստով/ներով, ով/ովքեր նշված չէ/չեն տվյալ խաղի արձանագրությունում:

գ) Եթե դարպասապահներից որևէ մեկն անսպասելի ֆիզիկական անկարողության /վնասվածքի պատճառով ի վիճակի չէ մասնակցել խաղին, ապա նա/նրանք կարող է/են փոխարինվել միայն հայտավորված դարպասապահներով, ով/ովքեր նշված չէ/չեն տվյալ խաղի արձանագրությունում:

29.02. Վերը նշված դեպքերում՝ մինչև տվյալ խաղի ավարտը, ակումբը պարտավոր է խաղի տեսուչին ներկայացնել համապատասխան տեղեկանք՝ ստորագրված ակումբի բժշկի կողմից, որտեղ մանրամասն նկարագրված կլինի վնասվածքի բնույթը:

ԳԼՈՒԽ 7: ՄԱՐԶԱՀԱԳՈՒՍՏԸ

Հոդված 30. Մարզահագուստի գույները

30.01. Առաջնությունների մասնակից ակումբները խաղաշրջանի մեկնարկից նվազագույնը 2 օր առաջ հաստատում և ՀՖՖ են ներկայացնում իրենց տնային, արտագնա և, առկայության դեպքում, պահեստային մարզահագուստները: Ակումբների խաղերին իրավունք ունեն մասնակցելու միայն ՀՖՖ-ի կողմից վերջնական հաստատված մարզահագուստով:

30.02. Խաղերի ընթացքում հայտավորված բոլոր ֆուտզալիստների մարզահագուստները պետք է լինեն միանման՝ սույն կանոնակարգի Գլուխ 7-ի պահանջների համապատասխան:

30.03. Հոդված 30-ում նշված պահանջները պարտադիր են կատարման նաև ֆուտզալիստի վերահայտավորման օրը:

Հոդված 31. Խաղահամարները

31.01. Թիմերի մարզահագուստի մեջքի հատվածի կենտրոնական մասում պարտադիր պետք է փակցված լինեն ֆուտզալիստների խաղահամարները: Խաղահամարները թույլատրվում է նաև փակցնել մարզահագուստի դիմացի մասում:

31.02. Ֆուտզալիստների խաղահամարները պետք է լինեն 1-ից մինչև 99-ի միջակայքում: Կարող են օգտագործվել միայն ամբողջական թվեր: 1-ին համարը պետք է գրանցված լինի թիմի դարպասապահի անվամբ:

31.03. Խաղահամարները պետք է հստակ ընթեռնելի լինեն մրցավարական անձնակազմի, մեկնաբանների, հանդիսականների և հեռուստադիտողների համար՝ մարզադահլիճի լուսավորության պայմաններում:

Հոդված 32. Մարզահագուստի վրա տեղադրված գովազդը

32.01. Մարզահագուստի վրա թույլատրվում է տեղադրել հետևյալ չափսերի գովազդ՝

ա) մարզաշապիկի դիմացի հատվածում հովանավորի տարբերանշանը կարող է լինել առավելագույնը 200 սմ², որը պետք է տեղադրված լինի կրծքավանդակի կենտրոնում,

բ) մարզաշապիկի մեջքի հատվածում՝ համարի ներքևի մասում, հովանավորի տարբերանշանը կարող է լինել առավելագույնը 100 սմ²,

գ) մարզաշապիկի թևքի վրա հովանավորի տարբերանշանը կարող է լինել առավելագույնը 25 սմ²,

դ) վարտիքի վրա վրա հովանավորի տարբերանշանը կարող է լինել առավելագույնը 25 սմ²:

32.02. Մարզահագուստի վրա արգելվում է տեղադրել գովազդ, որը պարունակում է քաղաքական, ռասսայական կամ կրոնական տարրեր:

Հոդված 33. Խաղի մարզահագուստների հաստատումը

33.01. Մրցող թիմերը պետք է ապահովեն տնային և արտագնա մարզահագուստների առկայությունը:

33.02. Առաջնության բոլոր խաղերի ժամանակ մարզահագուստի գույների համընկման պարագայում մարզահագուստը փոխում է հյուր թիմը: Հյուր թիմի մարզահագուստի փոփոխությունից հետո գույների համընկման պարագայում մարզահագուստը փոխում է դաշտի տեր թիմը: Յուրաքանչյուր պարագայում թիմերի մարզահագուստներ գույները չպետք է համընկնեն իրար: Եթե մարզահագուսների գույները համընկնում են և թիմերը չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ գույների ընտրության հարցում, ապա վերջնական որոշումը կայացնում են խաղի տեսուչը և մրցավարը:

33.03. Տեխնիկական գոտում գտնվող թիմերի անձնակազմի անդամները պետք է կրեն մրցող թիմերի մարզահագուստի գույների հետ չհամընկնող հագուստ:

33.04. Մրցող թիմերի բժիշկները և մերսողները պետք է լինեն մարզահագուստով:

33.05. Ֆուտզալիստին արգելվում է խաղի ժամանակ կրել ցանկացած տիպի զարդ: Այն բացառիկ դեպքերում, երբ ֆուտզալիստը կրում է որևէ զարդ, որն անհնար է հանել առանց ֆիզիկական ցավ պատճառելու, խաղի մրցավարի թույլտվությամբ վերջինս կարող է կրել այդ զարդը՝ բացառապես այն ծածկելու պարագայում:

ԳԼՈՒԽ 8: ՄԵԴԻԱ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳ

Հոդված 34. Խաղերի հեռարձակում

34.01. Հայաստանի Բարձրագույն Խմբի, Հայաստանի Գավաթի խաղարկության և Սուպերգավաթի հանդիպումների հեռուստատեսային և առցանց հեռարձակման իրավունքը (ներառյալ ՀՀ կիրառելի և վերաբերելի նորմատիվ իրավական ակտ(եր)ի իմաստով) պատկանում է ՀՖՖ-ին կամ պաշտոնական հեռարձակողին (եթե այդպիսին առկա է):

34.02. Արգելվում է Բարձրագուն խմբի մասնակից ակումբների կողմից հանդիպումների ընթացքում դրանց ամբողջական կամ հատվածային ուղիղ հեռարձակումը իրենց կամ մեկ այլ կազմակերպության պատկանող որևէ սոցիալական հարթակով:

Հոդված 35. ԶԼՄ-ների հավատարմագրումը և տեղակայումը մարզադաշտում

35.01. Հայաստանի Բարձրագույն խմբի և Հայաստանի Գավաթի խաղարկության մասնակից ակումբները նշված մրցումների բոլոր հանդիպումների համար պետք է կիրառեն ԶԼՄ-ների հավատարմագրման համակարգ և թույլատրեն վերջիններիս մուտքը մարզադահլիճ միայն հավատարմագրերի առկայության պարագայում:

35.02. Հանդիպումների ժամանակ ԶԼՄ ներկայացուցիչները պետք է լինեն մարզադաշտում իրենց համար հատուկ առանձնացված տեղերում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ում սահմանված գծագրի:

35.03. Մրցումներին մասնակից ակումբները պարտավոր են ֆոտոլրագրողների համար ապահովել տարբերիչ գույներով ժիլետներ և խաղի ժամանակ ապահովել նրանց ներկայությունը խաղադաշտում՝ համապատասխան Հավելված 1-ի գծագրի

ԳԼՈՒԽ 9: ԱԿՈՒՄԲԻ ԱՆՎԱՆՄԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ

Հոդված 36. Ակումբի ինքնության և իրավական խմբի կառուցվածքի փոփոխությունը

36.01. Պրոֆեսիոնալ մրցումների մասնակից ակումբի ինքնության (ակումբի անվանում, թիմի անվանում, կազմակերպաիրավական ձև, տարբերանշան, գույներ, իրավաբանական հասցե) փոփոխության գրանցումը թույլատրվում է միայն միջմրցաշրջանային հատվածում: Արգելվում է կատարել ակումբի ինքնության փոփոխություն խաղաշրջանի ընթացքում:

36.02. Եթե ակումբի ինքնության և/կամ իրավական խմբի կառուցվածքի փոփոխության գործընթացում փոփոխվում է միայն ակումբի անվանումը և տարբերանշանը և/կամ գույները, իրավաբանական հասցեն, ապա անվանափոխության և իրավահաջորդության ճանաչման գործընթացը կատարվում է սույն Գլխում սահմանված քայլերի հաջորդականությամբ և ընթացակարգով:

36.03. Եթե ակումբի ինքնության և/կամ իրավական խմբի կառուցվածքի փոփոխության գործընթացքում ակումբի ինքնության փոփոխության հետ մեկտեղ կամ առանց ինքնության փոփոխության տեղի է ունենում իրավական խմբի կառուցվածքի, վերահսկող կողմի և դրա անդամների, կազմակերպաիրավական ձևի փոփոխություններ կամ ակումբի վերակազմակերպում, ապա անվանափոխության և իրավահաջորդության ճանաչման գործընթացը կատարվում է սույն կանոնակարգի Հոդված 45-ի պահանջների և ընթացակարգի համաձայն:

36.04. Ակումբները անվանման փոփոխության նպատակով կարող են դիմել ՀՖՖ-ին միայն հետևյալ պահանջներից որևէ մեկի բավարարման դեպքում՝

ա) ակումբի հիմնադրումից անցել է առնվազն 3 օրացուցային տարի, կամ

բ) ակումբի նախորդ անվանափոխությունից անցել է առնվազն 3 օրացուցային տարի

Հոդված 37. Ակումբի ինքնության (ակումբի անվանում, թիմի անվանում, տարբերանշան, գույներ, իրավաբանական հասցե) փոփոխությունը և դրա գրանցումը ՀՖՖ-ում

37.01 Ակումբը պետք է գրավոր դիմի ՀՖՖ-ին՝ հայտնելով ակումբի ինքնության (անվանում, տարբերանշան և/կամ գույներ, իրավաբանական հասցե) փոփոխության մտադրության, դրա հիմնավոր պատճառների, ինչպես նաև նախընտրելի նոր անվանման մասին: Սույն գործընթացը պատշաճ կատարելու համար հարկավոր է ներակայացնել դիմում, որը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը.

ա) Առաջարկվող նոր անվանումը, որը պետք է համապատասխանի սույն հոդվածի 37.02 կետի պահանջներին,

բ) Անվանափոխության պատճառներն ու հիմքերը,

գ) Ակումբի իրավական խմբի կառուցվածքը անվանափոխությունից առաջ և ակնկալվող փոփոխությունից հետո,

դ) Ակումբի վերահսկող կողմի, նախագահի և սեփականատերերի տվյալները անվանափոխությունից առաջ և ակնկալվող փոփոխությունից հետո,

ե) Ակումբի իրավաբանական և գործունեության հասցեները անվանափոխությունից առաջ և ակնկալվող փոփոխությունից հետո,

զ) Ակումբի գույները անվանափոխությունից առաջ և հետո,

է) Ակումբի ղեկավարի կողմից հաստատված տեղեկանք՝ դիմումի ներկայացման օրվա դրությամբ ակումբի աշխատակիցների (այդ թվում քաղ. իրավական ծառայություններով ներգրավված անձանց և ֆուտբոլիստների), այլ ակումբների և ՀՀ հարկային և սոցիալական ապահովության պետական մարմինների նկատմամբ ֆինանսական պարտավորությունների մասին:

37.02 Ակումբի առաջարկվող նոր անվանումը պետք է համապատասխանի առնվազն հետևյալ բոլոր պահանջներին՝

ա) չունենա որևէ համընկնում ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման կամակարգում նախկինում և/կամ ներկայում գրանցված որևէ ակումբի կամ թիմի անվանման հետ,

բ) չունենա որևէ համընկնում ՀՖՖ-ի կողմից կազմակերպած մրցաշարերին մասնակցած որևէ ակումբի կամ թիմի անվանման հետ,

գ) չպարունակի ՀՀ-ում գրանցված որևէ կոմերցիոն ընկերության անվանում,

դ) ասոցացվի Հայաստանի Հանրապետության որևէ տեղանվան կամ պատմամշակութային արժեքի անվանման հետ:

Հոդված 38. Իրավահաջորդություն

38.01. Իրավահաջորդությունը Ակումբների վերակազմակերպման դեպքում կատարվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

38.02. Վերակազմակերպման արդյունքում առաջացած Ակումբները պարտավոր են ՀՖՖ ներկայացնել իրենց իրավահաջորդությունը հաստատող փաստաթղթեր, որից հետո միայն Ակումբներն իրավունք կստանան մասնակցելու ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ Մրցումներին:

ԳԼՈՒԽ 10: ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 39. Պայմանագրի գրանցումը

39.01. Ֆուտբոլային սուբյեկտների միջև պայմանագրերը, պայմանագրերի փոփոխությունը, լրացումը և լուծումը, ֆուտզալիստների՝ ակումբից ակումբ տեղափոխությունը կարգավորում է ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգով:

Հոդված 40. Վեճերի լուծումը

40.01. Ֆուտբոլային սուբյեկտների միջև ծագած վեճերը, համաձայն ՀՖՖ կանոնադրության, քննարկվում և վերջնական լուծում են ստանում ՀՖՖ-ում:

40.02. Պայմանագրային հարաբերությունների հետ կապված վեճերը քննվում են միայն ՀՖՖ-ում գրանցում ստացած պայմանագրերի առկայության դեպքում:

40.03. Մրցումների անցկացման հետ կապված այն իրավահարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն Կանոնակարգով, ենթակա են կարգավորման ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՖԻՖԱ-ի այլ նորմատիվ փաստաթղթերով:

Հոդված 41. Թիմերի մասնակցությունը ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին

41.01. 2025/2026թթ. խաղաշրջանի Ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնության չեմպիոն թիմն իրավունք է ստանում մասնակցելու 2026/2027թթ. մրցաշրջանի ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի (այսուհետ նաև՝ ՉԼ) խաղարկությանը:

41.02. 2026/2027թթ. մրցաշրջանի ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի խաղարկության մասնակից ՀՖՖ-ի չեմպիոն թիմի մասնակցությունից հրաժարվելու դեպքում, ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի խաղարկության մասնակցության իրավունքը փոխանցվում է Բարձրագույն խմբի առաջնությունում հաջորդ տեղը զբաղեցրած թիմին:

Հոդված 42. Այլ դրույթներ

42.01. Սույն Կանոնակարգի որևէ դրույթի խախտումը կարող է առաջացնել ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կանոնակարգով սահմանված պատասխանատվություն:

42.02. Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից հաստատման պահից:

ՀԱՎԵԼՎԱԾ 1: ԽԱՂԱԴԱՇՏԻ ԳԾԱԳԻՐԸ



1. Թիմերի ֆուտբոլիստների դիրքը խաղի մեկնարկից առաջ
2. Ֆոտոլրագրողների դիրքը խաղի մեկնարկից առաջ
3. Ֆոտոլրագրողների դիրքը խաղի մեկնարկից հետո
4. Պահեստայինների նստարաններ

ՀՖՖ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԶԱԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (2025-2026 ՄՐՑԱՇՐՋԱՆ)	
Հաստատված է՝ ՀՖՖ Գործադիր Կոմիտեի կողմից 23.10.2025թ. -ին	*Ուժի մեջ է մտնում 23.10.2025թ. -ից*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
ՖՈՒՏԶԱԼԻ ԲԱԺԻՆ
ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ 27
ԵՐԵՎԱՆ, 0010, ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԵՌ. +374 11 88 88 08
ԷԼ. ՓՈՍՏ. FUTSAL@FFA.AM
WWW.FFA.AM